

5-6(328-329)
2.03.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմնաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԼԵՉՎԻ ԱՊՍՏԱՆ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՊՍՏԱՆ Է

Փետրվարի 21-ը նշվում է որպես Մայրենիի միջազգային օր: Այն հռչակվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ, և բնականաբար, բոլոր ազգերն էլ յուրովի նշում են այդ տոնը՝ շեշտելով ազգի ինքնության պահպանման գործում մայրենի լեզվի հազվագյուտ դերը: Գլոբալիզացիայի պայմաններում սա խիստ արդիական է, որովհետև տեղի է ունենում ուժացման մի նոր երևույթ, ինչը շատ ժողովուրդների համար մտահոգիչ իրողություն է դարձել: Ուժացում՝ սեփական երկրի ներսում, որին հանգեցնում է օտարանվությունը:

Միավաճ չենք լինի, եթե ասենք, որ մեր օրերում օտարանվության է մղում նաև համա-ցանցը: Անշուշտ, համացանցը դրական է ազդում անձի գրագիտության վրա, սակայն հետևելով սոցիալական ցանցերին, ցավով նկատում ենք, որ օգտատերերի գերակշիռ մասը վիրտուալ շփումներում գրագրություն է վարում լատինատառ լեզվով: Համակարգիչը հնարավորություն է տալիս Unicode տարբերակով գրել հայերեն, բայց, չգիտես ինչու, շատերը հրաժարվում են օգտվել դրանից: Ավելին, մի շարք տերմիններ, որոնք հայերենում ունեն իրենց համար-ժեքը, հաճախ օգտագործվում են անգլերենով:

Առավել մտահոգիչը թերևս այն է, որ համա-կարգիչի օգտվողները մեծամասամբ երիտա-սարդներ են՝ ուսանողներ, դպրոցականներ, նույնիսկ ցածր դասարանների աշակերտներ: Նրանց լեզվամտածողության մեջ սկսում են ձևավորվել կարծրատիպեր, որոնք անձին աստիճանաբար հեռացնում են մայրենիի նկատմամբ պատկառանքից, իսկ առանց մայր լեզվի հանդեպ պատկառանքի՝ անհնար է սիրել հայրենիքը, սեփական ազգին ու ժողովրդին:

Գաղտնիք չէ, որ մատաղ և երիտասարդ սե-րունդն այսօր հակված չէ ակտիվ ընթերցասի-րության, իսկ եթե անգամ ընթերցում է՝ առավե-լապես գեղագիտական արժեքներից զուրկ կամ անճաշակ գրականություն, որպիսին լինել է հա-մացանցը: Դժվար, եթե չասենք՝ անհնար է դպրոցականներին հեռու պահել կայքերից: Ցա-վալիորեն քիչ ծնողներ են տանը վերահսկում իրենց զավակների «ինտերնետ էքսկուրսիաները», և այս համատարած անտարբերության համար ստիպված են լինում դպրոցում պատասխան տալ ուսուցիչները:

Բայց մայրենիի վրա բացասաբար ազդող գործոն է ոչ միայն համացանցը: Հայկական հե-ռուստաալիքներով ամեն օր ցուցադրվող սե-րիալների ու տարաբնույթ հեռուստաշոունների ժարգոնային բառապաշարն ուղղակի իմաստով սպառնալիք է դարձել մեր լեզվական ինքնու-թյանը: Իսկ չէ՞ որ այդ եթերային թողարկումները դիտողների մի ստվար մասը դպրոցահասակ երեխաներ են:

Անհրաժեշտ է ոչ միայն Մայրենիի միջազգա-յին տոնի առիթով՝ դպրոցներում պարբերաբար կազմակերպել հայերենի պահպանման խնդր-ներին նվիրված միջոցառումներ: Եվ իհարկե՝ հանրակրթարաններում խոսել բացառապես գրական հայերենով, ինչը միշտ և ամենուրեք չի արվում: Լավագույն դեպքում դպրոցներում գրական հայերենով խոսում են միայն ուսուցիչ-ները, մինչդեռ պետք է անաղարտ հայերենով խոսեն նաև դպրոցականները:

Շնչարիտ է ասված՝ մայրենի լեզվի ապա-զան՝ հայրենիքի ապագան է:

«ԼՍԱՐԱՐ»

ՈՐ ՀԱՎԵՏ ԶՆՊԱ ՄԵՐ ՈՍԿԵՂԵՆԻԿԸ

Փետրվարյան տոնական օրե-րի շքերթում մի առանձին խան-դավառությամբ է նշվում Մայրե-նիի օրը: Եվ դա պատահական չէ. հայերենը մեր բազմադարյան պատմության ընթացքում միշտ էլ ունեցել է ազգափրկիչ նշանակու-թյուն:

88-ի ըցախահայության պայ-բարը նաև մայրենիի համար էր: Այսօր, շնորհիվ մեր Պաշտպանու-

թյան բանակի, ամուր են Արցա-խի դարպասները, իսկ մեր մայ-րենիի պահպանությունը գտնվում է պետության հսկողության և հո-վանավորության ներքո: 1996 թվականից ԼՂՀ-ում գործում է «Լեզվի մասին» օրենքը, իսկ 2005թ. ձևավորված Լեզվի պե-տական տեսչությունն իրակա-նացնում է վերահսկողական գոր-ծառնություններ պետական մարմին-

ներում, հիմնարկ-ծեռնար-կություն-ներում և կազմա-կերպու-թյուննե-րում գոր-ծավարու-թյունը



հայերեն տանելու նպատակով, կրթու-թյան համակարգում դասավանդումը և դաստիարակությունը գրական հայերենով իրականացնելու՝ «Լեզվի մասին» ԼՂՀ օրենքի պահանջի վե-րահսկման նպատա-կով կազմակերպում ստուգայցեր հանրա-պետության դպրոց-ներ ու կրթական հաս-տատություններ:

Դա՛ ամբողջ տարվա ընթաց-քում: Իսկ լեզվի տեսչության կող-մից կազմակերպված հանդիսու-թյունը Մայրենիի միջազգային օր-վա առթիվ, Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում՝ սիրո խոստովանու-թյուն և փառաբանում էր այն մայ-րենի: Ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Արյանը, ուսումնական հաստա-տությունների ներկայացուցիչ-ներ, պարզապես՝ մայրենիի ջա-տագովներ: Երեկոն լի էր մայրե-նիի գովերգմամբ:

2

ԹՈՂ ԲՈՒՈՐ ՀԱՅԵՐԻ ՀՈՒՐԹԵՐԻՉ ՀԱՅԵՐԵՆԸ ԿԱՐԿԱԶԻ

Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզունն ու հա-վատը: Լեզունը փոխիր, հավատը ուրաջիր, էլ ինչո՞վ կարեն սախ, թե ո՞ր ազգիցն են, ձեզ եմ ասում, ձեզ, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, հավատը դային բռնե-ցեք...

Խաչատուր Արմվյան

Մեծ լուսավորչի այս իմաս-տուն խոսքերը գրվել են այն ժա-մանակ, երբ հայոց լեզուն օրիա-սական պահեր էր ապրում, բայց դրանք արդիական են նաև այ-սօր, չնայած հայոց լեզուն երկու հայկական՝ Հայաստանի և Ար-ցախի պետու-թյունների պետա-կան լեզուն է, գտնվում է բոլորիս հոգածության և ուշադրության կենտրոնում:

Ճակատագրի բերումով, հա-յերի մի ստվար մասը սփռվել է աշխարհով մեկ, գրկվել է հայրե-նիքում ծնվելու և ապրելու իրա-վունքից, հեռու մնալով, խորթա-ցել մեր երկրից, սովորություննե-րից ու լեզվից:

Դարեր շարունակ պետակա-նություն չունեցող մեր ժողովր-դին, իսկապես, հայ են պահել մեր լեզուն ու հավատը:

Հայկական բարձրավանդա-կում ապրած հնագույն շատ ցե-ղերի նման պատմության ասպա-րեզից կանհետանար նաև հայ ժողովուրդը, եթե չպահպաներ իր լեզուն:

Դարեր շարունակ պետակա-նություն չունեցող մեր ժողովր-դին, իսկապես հայ են պահել մեր լեզուն ու հավատը:

Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներից, Կկորչեինք, եթե ճամփին չբոցկվտար հայոց լեզուն:

Իր պատմական ճանապար-հին հայ ժողովուրդը շատ բան է կորցրել՝ թագ ու գահ, զորք ու գույք, հող ու սար...

Պահածների մեջ ամենա-թանկն ու անփոխարինելին լե-զունն է: Այն խել չկարողացան, քանի որ մեր հոգու մեջ էր: Քանի կապրենք մենք, կապրի նաև հա-յերենը, վստահորեն կարելի է ասել և հակառակը՝ քանի կապրի հայերենը, կապրի նաև հայը:

Լեռնաբուխ սառնորակ աղբ-յուրների քաղցրահնչյուն կար-կաչն է մեր լեզվի մեջ, ցորեն հա-ցի ու երփնագույն ծաղիկների բուրմունքը, մանուկների անուշ թոթովանքը, բյուր նահատակնե-րի վերջին հառաչանքն ու նրանց մայրերի ու զավակների մորմոքը, արարման աշխարհալուր դողան-ջը:

Նրա խնամքը, անաղարտու-թյունն ու պաշտպանությունը դր-ված են մեզ վրա: Մենք պետք է կամուրջ դառնանք նրա դարե-դար անցումին, մեր շուրթերով պիտի բորբոք պահենք նրա վա-հագնաբոց կրակը, մեր շնչով ու արյունով պիտի կրենք նրան մեր մեջ և փոխանցենք մեր սերունդ-ներին:

Աշխարհասփյուռ հայրենա-կիցներ, ուզենք թե չուզենք, մեր լեզվի հարատևության շղթայի մի օղակն ենք և չպետք է թույլ տանք, որ շղթան այդ կտրվի: Հա-յոց այբուբենի տառերը գիմվոր-ների պես պաշտպանել են մեզ մեր թշնամիներից: Մենք նախ պետք է խոնարհվենք Մաշտոցի առաջ, որ երկնել է հայ տառերը, և որպեսզի դուք է մեր սերունդ-ները հայ մնաք, ուր էլ լինեք, պի-տի հայոց լեզուն չնոռանաք:

Հասկանալի է, որ դուք պետք է իմանաք այն երկրի լեզուն, որ-տեղ ապրում եք, որի քաղաքա-ցիներն եք: Դա անհրաժեշտու-թյուն է: Սովորեք այնքան օտար լեզուներ, որքան կարող եք, չէ՞ որ «քանի լեզու գիտեք, այնքան մարդ եք»: Երբեք չդավաճանեք ձեր հոգու լարերին՝ ձեր մայրե-նիին: Չփոխեք այն ո՞չ օտարի դո-լակներով, ո՞չ տիտղոսներով և ո՞չ դրամով:

Աճներելի մեղք է մայրենին մոռանալը: Մայրենի լեզուն մար-դու հոգևոր հարստության նա-խադրում է: Մարդը մտածում է մայրենի լեզվով, մայրենի լեզվով ավելի հստակ են ձևավորվում մտքերը, անկաշկանդ են արտա-բերվում բառերն ու նախադասու-թյունները:

Չեզ համար երկի դժվար է արտահայտվել օտար բառերով: Դուք մտածում եք մայրենի լեզ-վով և մտքում թարգմանում: Եթե մայրենին չփոխանցեք ձեր որդի-ներին, նրանք օտար լեզվով կմ-տածեն ու կարտահայտվեն: Իր ազգն ու ազգայինը, իր մայրենին չսիրողն ու չիմացող չի կարող որդիներին սիրել և հոգով կ-նանկանա... Ծանոթացրեք ձեր որդիներին հայերենի գանձերին, հոգով ունկնդրեք ձեր նախնինե-րին և հայ մնացեք:

Չմանավեք այն բախտախն-դիրներին, որոնք օտարանվու-թյունից ու շահամոլությունից դրդված, նույնիսկ ազգանվան «յան»-երն են ջնջել և «ով»-երով փոխարինել: Անցել են այդ տխուր ժամանակները, ազգային զարթոնք է ապրում մեր ժողո-վուրդը, աշխարհում ճանաչում ունենք, հպարտությամբ կրեք

2

ՄԱՅՐԵՆԻԻ ՕՐ

ՈՐ ԸԱԿԵՏ ԶՆՉԱՄ ՄԵՐ ՈՍԿԵՂԵՆԻԿԸ

1 Երգով, ասմունքով, պարով այն ներկայացրին Ստեփանակերտի ՄՊՍԿ, Գյուրջյանի անվան արվեստի դպրոցի սաները, ժողովրդական, վաստակավոր դերասաններ Քաջիկ Հարությունյանը, Սամվել Եվրիյանը, «Մենք ենք, մեր սարերը» երգի-պարի պետական ազգագրական համույթը: *Այսօր մայրենին պաշտպանված է օրենքով, բայց նրա անաղարտ պահպանումն ամենօրյա խնդիր է: Երեկոյին ներկայացված «Զրույց փողոցում» փոքրիկ դրվագը, որտեղ երկու երիտասարդ աղջիկներ երկխոսեցին աղավաղված, ռուսերանախառն ու ժարգոնային հայերենով, ինչը, խոստովանենք, տիպական է որոշ երիտասարդների, զգաստացնող էր: Սա նշանակում է, որ մշակութային այս կործանարար պատերազմում մենք ունենք մեր հիմնախնդիրները: * 21-րդ դարի մարտահրավերներին դիմագրավելու՝ ազգի ինքնությունը պահպանելուն հավատարիմ սերունդ դաստիարակելու գործում մեծ է ուսուցչի առաքելությունը: Այս օրերին հանրակրթական բոլոր դպրոցներում աշխուժություն էր տիրում: Միամսյակում հաջող քննություն բռնելու համար կազմակերպիչները ձգտել են Մայրենիի օրվան նվիրված միջոցառումները դարձնել ինքնատիպ: Զևերը տարբեր էին, բայց բովանդակությունը նույնն էր՝ փառաբանել մեր ոսկեդեմիկ հայերենը: *Լեզվի տեսչությունն այդ միջոցառումներին հետևել է նախարարություն ուղարկված տեսագրությունների միջոցով և կատարել ընտրություն՝ լավագույններին խրախուսելու համար: Երեկոյին տեղի ունեցավ պարզևատրաման արարողություն: ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը հայերենի պահպանման և տարածման գործում ունեցած վաստակի և Մայրենիի միջազգային օրվա առթիվ նախարարության պատվոգրով ու հուշանվերներով պարգևատրեց ներքոհիշյալ մանկավարժներին:

- Նաիրա Սարինյանին - Ասկերանի շրջանի Խաչենի միջն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
- Լարիսա Դանիելյանին - Ասկերանի շրջան, Ալենադեյուրի մ/դ
- Մարգարիտա Գյուրջյանին - Մարտունու շրջանի Զեյնեի մ/դ
- Սվետա Չալաբյանին - Քարվաճառի մ/դ
- Լաուրա Աբրահամյանին - Հաղործի շրջանի Տունու մ/դ
- Նանար Պետրոսյանին - Հաղործի շրջանի Դրախտիկի մ/դ
- Գրետա Գրիգորյանին - Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի գլխավոր մասնագետ
- Սուսաննա Մկրտչյանին - Ֆիզմաթ հաստիկ դպրոց
- Արդա Հարությունյանին - Ստեփանակերտի հ. 7 հիմն. դպրոցի դասվար
- Նատաշա Պողոսյանին - Մարտակերտի Վ. Բալայանի անվան հ. 1 մ/դ
- Գոհար Հովհաննիսյանին - Մարտակերտի շրջանի Մաղավուզի մ/դ
- Վարդիթեր Հակոբյանին - Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմն. դպրոց
- Օլյա Իշխանյանին - Շուշիի Սուրբազանի անվան ավագ դպրոց
- Ժենյա Հարոյանին - Քաշաթաղի շրջանի Արծվաշենի հիմն. դպրոց
- Լուսինե Գրիգորյանին - Քաշաթաղի շրջանի Սարատակի մ/դ դասվար

Լեզվի տեսչության պետ ժամանա Հովսեփյանը, շնորհավորելով պարգևատրվածներին, նշեց, որ նրանք մի փոքր մասն են նվիրյալների այն բանակի, որը կա և գործում է Արցախում և բոլորին շնորհակալություն հայտնեց իրենց ազգանվեր գործունեության համար:

Ամբողջ երեկոյի ընթացքում այն գաղափարն էր հնչում, որ հայերենն է հայոց լինելիության ակունքը, հզորության արմատը, հավերժության հիմքը:

Սեփ. Լրավորություն

ԵՎ ՄԱՆԿԱՆՈՒՄ Է ՄԵՐ ԱԼԵՆԵՐ ԸՆՅՈՑ ԼԵՂՈՒՆ

Փետրվարի 21-ին առանձնահատուկ տոն էր Մարտունու Մոնթե Սելբոնյանի անվան հ. 2 մանկապարտեզում: Մանկապարտեզում կազմակերպվեց միջոցառում, որը յուրօրինակ դաս էր, զույժ՝ հայոց այբուբենի, նրա ստեղծողի, հայապահպան դերի ու նշանակության:

Ասում են՝ երջանիկ է այն ազգը, ով ունի իր գիրն ու լեզուն, սակայն ունենալը քիչ է, անհրաժեշտ է անաղարտ պահել ու խոսել ճիշտ հայերենով: Ինչպես Մեծն թունամյանն է ասում. «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության և երջանիկ անձնախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը»:



Մեր լեզուն մեր հույսն է ու ողջ հայության անմահության գրավակա՞նը. այս էր մարտապաշունչ հայերենի պահպանության ու տարածմանը նվիրված միջոցառման ոգին:

Հուզիչ ու ոգեշնչող էր մանկապարտեզի ավագ խմբի երեխաների գրական-երաժշտական ասմունքն ու պարը, որը փայլուն առիթավառ էր հայերենի նրանց իմացության: Հայկական ոգով ու շնչով նրանք ներկայացրին իրենց սովորածը՝ որպես հոգուն թաքնված, նախնիների գեներով փոխանցված հայ լինելու հպարտություն, սեր մայրենի լեզվի, հայկական ոգե-շունչ գրականության և մշակույթի նկատմամբ:

Մարտապաշունչ հայերենի պահպանության համար երախտագիտության իր խոսքն ասաց դաստիարակ Հասմիկ Մկրտչյանը՝ հայոց լեզվին նվիրված գեղեցիկ բանաստեղծության արտասանությամբ:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը ստեղծել է բազում գանձեր, պատառիկներ, որից սկիզբ է առել մեր ժողովրդական բանահյուսությունը:

Այս առումով բավականին հետաքրքիր էր բանահյուսության ներկայացումը դաստիարակչուհի Կարինե Առստամյանի կողմից: Նա հայտնվեց ազգային տարագով և փոքրիկներին հարցրեց, թե ինչ առածներ, ասացվածքներ, հեքիաթներ, հանելուկներ, շուտասելուկներ գիտեն: Երեխաները սկսեցին զվարթ արտասանել: Փոքրիկների իմացությունը ոգևորիչ էր:

Միջոցառումն իմաստալից ու տրամադրող էր, որը դրական լիցքեր հաղորդեց ոչ միայն հանդիսատեսին, այլև երեխաներին: Այն հայ մանուկին հայ պահելու, իր արմատներին մոտեցնելու մեծ առաքելության հաստատումն էր:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ ք. Մարտունի

ԹՈՂ ԲՈՒՈՐ ՀԱՅԵՐԻ ՇՈՒՐԹԵՐԻՉ ՀԱՅԵՐԵՆԸ ԿԱՐԿԱԶԻ

1 փոխել: Հայ ժողովուրդը զենքով պաշտպանել է իր մատյանները, թաքցրել, փրկագնել, նորանոր օրինակներ արտագրել:

Մատյանները թաղել են ու դրանց վրա ողբացել, ինչպես գոհված մարտիկների վրա: Օժիտ են տվել մատյանները, հիվանդներ են բուժել նրանցով՝ զվնների տակ դնելով:

Գաղթական հայ մայրերը ավագի վրա այբուբեն են սովորեցրել իրենց երեխաներին:

Այժմ բազմաթիվ հնարավորություններ ունենք ձեր երեխաներին մայրենի լեզուն ուսուցանելու, ազգային ավանդույթների ծանոթացնելու, նրանց հայեցի դաստիարակելու համար: Ձեզ կօգնեն համակարգիչները, հառուստատեսությունը:

Մայրենին յուրաքանչյուր մարդու հոգու մեջ է, այն կարող է հորդալ ուրախության և տխրության պահերին:

Ձորավար Գայը՝ Հայկ Բժշկյանցը, կատարելով պետական կարևոր առաջադրանք, ռուսական քաղաքի հրապարակում հավաքված բազմությանը գարմանք պատճառեց՝ հուզմունքից ելույթը հայերեն սկսելով՝ չնայած երկար տարիներ հայերեն չէր խոսել («Ընկերներ, ընկերներ...»):

Հրաչյա Քոչարի «Արյան կանչով» պատմվածքի հերոսուհի Այանը՝ Աստղիկը, որը երեք տարեկանում Արցախից տեղափոխվել է Պետերբուրգ և հայրենի միջավայրից կտրվելով, մոռացել էր հայերեն ու ռուսացել, մահվան շեմին հանկարծակի սկսել է զառանցել հայերենով: 75 տարի առաջ մարած, կորած հնչյունները կենդանացել ու արձագանքել էին նրա հոգու խորին գաղտնարաններում և այն-

տեղից դուրս գալով՝ թրթռում էին շրթունքների վրա:

«Ձորանաս, քե մատաղ, գորանաս»...

Աշխարհասփյուռ հայրենակիցներ, ինչպիսի պայմաններում էլ ապրեք, ձեզ պակասում է մի բան՝ հայրենիքի կարոտը: Երկիր մոլորակի վրա ամեն մի թռչուն իր բուն ունի, ամեն ազգ՝ իր հայրենիքը: Հայինը քարոզարտ Հայաստանն է՝ արևահամ մրգերով, քաղցրաբառ լեզվով: Հիշեք, առանց ձեզ օտար երկրներում կյանքն իր սովորական հունով կզնա, ձեր բացակայությունն այրուղի այնքան էլ չի զգացվի, բայց դուք պետք եք ձեր հայրենիքին: Հայաստանին ու Արցախին, որտեղ դատարկ տները ձեզ են սպասում, իսկ թե չէ կարող վերադառնալ, որտեղ էլ լինեք՝ հայ մնացեք:

Բայց նա է հայ, ով հովազի, Արմախուն երախունն էլ իր մայրենի լեզվով խոսի, Մոր կաթի հետ ծծած լեզվով...

Դժբախտաբար, միայն օտարության մեջ ապրող մեր հայրենակիցներից շատերը չէ, որ մայրենի լեզվով չեն խոսում: Մեզ մոտ էլ կան այնպիսի անհատներ, որոնք երկի շրջապատում տարբերվելու համար խոսում են ոչ հայերեն կամ էլ՝ այնքան օտարահունչ բառեր են օգտագործում, որ հայերենը ծաղրածանակի է ենթարկվում:

Եկեք ոչ միայն խոսենք հայերեն, այլև անաղարտ պահենք այն՝ լինի դա գրականը թե քարոզաբանը:

Թույլ չտանք մեր լեզուն ավերեն, եկ խոսենք, միշտ խոսենք հայերեն...

Նաիրա ԱՌՍՏԱՄՅԱՆ Հայոց լեզվի եվ գրականության ու վաստակավոր ուսուցչուհի

ԵԿԵՆ ԼԻՆԵՆ ԸՆՅՐԵՆԱՍԵՐ ԵՎ ԸՆՅՐԵՆԱՍԵՐ

Ստեփանակերտի Ա. Գրիբոեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի դահլիճը տոնականորեն էր ձևավորված: Պատերին փակցված համապատասխան նյութերը, պատի թերթեր՝ նվիրված Մայրենիի օրվան, ասեղնագործված հայերեն ձեռագրող այբուբեն, նկարներ, հայ գրերի երկնող Մ. Մաշտոց, ոսկեբերան Սայաթ-Նովա, սպիտակ ձիավոր Անդրանիկ, սպիտակ դրոշակակիր Հ. Թումանյան, ոսկեծեք եղիշե Զարեմ, օրվա խորհուրդը նշանավորող մարդիկ, որոնց ծնունդը համընկնում էր փետրվարյան պատմական իրաշունչ օրերի հետ:

Ցերեկույթին ներկա էին տարբեր դասարանների աշակերտներ, հյուրեր, ծնողներ, ուսուցիչներ, փոխտնօրեններ և դպրոցի տնօրենը: Ողջույնի խոսքով հանդես եկավ դպրոցի փոխտնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Էլենուրա Ալեքսանյանը:

- Այսօր տոն է բոլորիս համար: 1993թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն փետրվարի 21-ը հռչակեց Մայրենի լեզվի միջազգային օր: Իսկ 2005 թվականից համայն հայության կողմից այն նշվում է որպես Հայոց լեզվի տոն: Մայրենին մեր հոգևոր հայրենիքն է: Նրա մեջ է մարմնացած հայ ժողովրդի ոգին: Մեր մշակույթի գանձարանի թերևս ամենամեծ ու ամենահարուստ հրաշալիքը հայոց լեզուն է: Ամենադաժան ժամանակներն անգամ չեն կարողացել կործանել մեր լեզուն: Հայը կարողացավ պահել-պահպանել իր լեզուն և արժանավայել փոխանցել գալիք սերունդներին:

Սիրելի ծնողներ, ուսուցիչներ, աշակերտներ, դուք հիանալի գիտեք մայրենի լեզվի դերն ու արժեքը մեր կյանքում: Կասեմ ավելին. մենք՝ ուսուցիչներս, ամենօրյա մեր աշխատանքում ձգտում ենք հայոց լեզուն ներարկել արյունատար անոթները սնուցող երակների մեջ, որի շնորհիվ էլ դարերից մեզ փոխանցված գանձը շարունակում է հարստացնել ու փոխանցվել գալիք սերունդներին: Ճիշտ է՝ նկատելի Համո Սահյանը՝ գրելով. «Ի՞նչ ունենք էլ աշխարհում, որ այսքան մերը լինի»: Սահյանական այս տողերը նորից ու նորից գալիս են ապացուցելու, որ մեր լեզուն մեր հավատն է, մեր խիղճը, մեր հոգու արդար կանչն ու ընդվզումը: Եվ այսօր էլ այն շարունակում է իր սուրբ առաքելությունը կատարել:

Եկեք այս մասին մտածենք ազգովի: Լեզվի պահպանությունը սկսվում է ընտանիքից, ձևավորվում դպրոցում և հարստանում կյանքում: Լեզուն է, որ հային հայ պահեց, և հայը կարողացավ անհաղթահարելի հաղթահարելի դարձնել: Եվ դար դարի ետևից այն թիկունք եղավ իր ժողովրդին, որովհետև քաջ զինվորից բացի, ունեցել ենք և ունենք հայերենի ուսուցիչ, ով իր գործով տառը զինվոր դարձրեց, իսկ բառը՝ բանակ: Եվ այդ քաջությամբ ու արիությամբ կռվեց Ավարայրում, Ելքաբերդի Դեղ-Ձորում, Սարդարապատում ու Արցախ աշխարհում... Ունենք լեզվի գիտակներ, ովքեր միշտ հիշեցնում են ու արթուն պահում մեր հոգին, որ լավ է կույր լինել աչքով, քան կույր՝ մտքով, քանզի կույր ազգի ապագան անորոշ ու մառախլապատ է:

Փետրվար ամիսը հազեցած է արցախահայության և առհասարակ, համայն հայության համար պատմական իրադարձություններով: Քանի որ այն Արցախի ժողովրդի համար նշանավորվեց մեծ իրադարձությամբ: 25 տարի առաջ Արցախը բռնկեցվեց ու ալիքվեց: Ու դա այսօր մեր պետական անկախության դժվարին ուղու սկիզբը հանդիսացավ...

Իսկ օրվա հերոսները ռուսական 3-րդ դասարանցիներն էին: Մանուկները փառաբանում էին ոսկեդեմիկ մայրենին: Նրանց մատաղ շուրթերից պոկված ամեն բառ մի կրակոտ երդում էր առ մայրենին: Իսկ երգն ու պարն ուղեկցվում էին ծափահարություններով:

Աշակերտներին շնորհակալություն հայտնելով՝ է. Ալեքսանյանն իր խոսքն այսպես ավարտեց. «Մեծն Աբովյան հայրենասերի և մանկավարժի կողքին պիտի կանգնի հայ ուսուցիչը՝ իր մարդկային ազնիվ կերպարով՝ որպես ուսուցիչ, որպես լույսի ցահակիր և հնչեցնի Մեծն Լուսավորչի խոսքը. «Ձեզ են ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անունին մեռնեն, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցեք»:

Եկեք հայերեն սիրենք մեր Արցախը, հայերեն կերտենք մեր ապագան, եկեք հայերեն ծծողները ու հայերեն խոսենք, եկեք լինենք հայերենասեր և հայրենասեր...

Վերջում ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Լյուդմիլա Հովհաննիսյանը: Նա բարձր գնահատեց աշակերտների աշխատանքը, դրականորեն խոսք ասաց է. Ալեքսանյանի վարպետության, մանկավարժական տակտի մասին: Գովաբանեց աշակերտների պատրաստվածության բարձր մակարդակն ու ակտիվությունը: Տնօրենը հատկապես շեշտեց կրթօջախում գրական հայերենով մաքուր խոսելու անհրաժեշտության մասին՝ ելնելով նրանից, որ աշակերտների գերակշիռ մասը հայրենադարձներ են:

Լեզվին նվիրված շարադրությունների և ասմունքի մի խումբ ակտիվ աշակերտներ տնօրենության կողմից արժանացան պատվոգրերի:

Ուրախ ԱՌՍՏԱՄՅԱՆ Սերեփ. հ. 3 դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՀԱՅՐԵՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԵՆՅԱՑ ԴԱՍ՝ ՆԿԻՐՎԱԾ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ

Փետրվարի 20-ը համարվում է Արցախի վե-

Յուրաքանչյուր տարի Մարտունու հ. 1 հու-

Յայրենյաց դասը կազմակերպել էին դպրո-

Երեխաները, պատմության շրջան ձգելով,

Բանաստեղծություններ, փոխտնօրեն Վ. Շիրինյանի դաշնամուրի նվա-

զակցությամբ կատարում խորտա ու ազգասի-

Պասն, իրոք, հասավ իր նպատակին: Բոլոր

Վերջինսը Շիրինյանը նշեց, որ 25 տարինե-

«Մեր ժողովուրդը միշտ էլ քիչ բարեկամներ

Օրվա առթիվ շնորհավորանքի և դասի կարևորության վերաբերյալ կարծիքներ հայտ-

րունակությունն է, ու նման դասեր առաջիկա-

Գարևորելով օրվա նշանակությունը մեր

Յ. Հակոբյանը հիշեց այն օրերը, երբ ինքը

«Մեր ուժը մեր գիտելիքն է, ու այսօր ավելի

Վ. Շիրինյանը ևս մեկ անգամ կարևորելով

Նմանատիպ դասեր ու միջոցառումներ են

Կարինե ԳԱՐԱՍՅԱՆ

ՄԵՆՔ ԵՆՔ, ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

«Ինքն իրեն հարգող ժողովուրդն ինք-

Գարեգին Նժդեհ

25 տարի առաջ Ղարաբաղի ժողո-

Անկախության ճանապարհի ընտրած

Արյան ու գեների կանչով մեզ հասած

Փետրվարի 20-ին մեր հանրապետու-

Յայրենյաց դասը կազմակերպել էին դպրո-

Յայրենյաց դասը կազմակերպել էին դպրո-

Մեր երիտասարդ հանրապետության

Ստանա ԳՐԻԳՈՐՅԱՆ Հացու հիմն. դպրոցի փնթրեն

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՆԿԻՐՎԱԾ ԶԱՎԱԿ

Մեծագույն ճշմարտություննե-

Յայրենիքին նվիրված զավակ էր

Ռուսական Մարտիրոսյանը՝ Հաղոր-

Արմեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Հաղորդի շրջանի Քուրա-

ես, մի՛ արի, բայց նա չէր լսում:

Հողեր գյուղի ազատագրման

Ռուսական Մարտիրոսյանը հետ-

Մեր սուրբ պարտքն է ոչ միայն

Արմեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Հաղորդի շրջանի Քուրա-

Արմեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Հաղորդի շրջանի Քուրա-

ՄԱՅՐԵՆԻՆ ՎՍՏԱՅԵԼԻ ԶԵՌՔԵՐՈՒՄ Է

Յուրաքանչյուր օր հայ դպրոցի գերխնդիրը պետք է



լինի աշակերտին սովորեցնել մայրենի լեզվով՝ բանա-

Անմասն չմնաց նաև Քարվաճառի Վ. Սարոյանի ան-

լեզվին: Միջին և տարրական օղակը մասնախմբերի ան-

դամների և աշակերտների համատեղ

Ուսուցչուհի Ս. Չալաբյանի կազ-

Իրենց բովանդակությամբ և երե-

Համոզված կարելի է ասել, որ մեր դպրոցում հայոց

Անահիտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Քարվաճառի միջև. դպրոցի

լեզվին: Միջին և տարրական օղակը մասնախմբերի ան-

դամների և աշակերտների համատեղ

Ուսուցչուհի Ս. Չալաբյանի կազ-

Իրենց բովանդակությամբ և երե-

Համոզված կարելի է ասել, որ մեր դպրոցում հայոց

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ

ՈՒՉՄԱՆԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ` ԱՄՈՒՐ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆԻ ՕՐԸ ՁՈՐԱՍԱՍՈՒՄ

Քաշաթաղի շրջանի Տիգրանավան գյուղի միջնակարգ դպրոցը 2010 թվականից պատվով կրում է Արցախի հերոս Պետրոս Ղևոնդյանի (Պետո) անունը: Ռազմահայրենասիրական դաստիարակության գործը դպրոցում դրված է ամուր հիմքերի վրա: Այդ մասին են խոսում ավանդույթ դարձած արիության դասերը:

Կարծես երեկ էր... Անվանակոչման օրը աշակերտները երդվեցին. «Հայրենիքի իսկական քաղաքացի դառնալու համար մեզ ուղեցույց է Արցախյան ազատամարտում զոհված մեր բոլոր հերոսների ապրած կյանքը»:

Դպրոցն այսօր էլ ընդգծված ռազմահայրենասիրական ուղղվածություն ունի՝ շնորհիվ դպրոցի տնօրեն Էլյա Միրզոյանի և դպրոցի զինղեկ՝ Արցախյան ազատամարտի մասնակից, պահեստազորի փոխգնդապետ Ռազմիկ Պողոսյանի ու մանկավարժական կոլեկտիվի: Ե. Միրզոյանի նախաձեռնությամբ և զինվորական հրամանատարների աջակցությամբ արիության դասերն անց են կացվում մեր հերոսների անունը կրող գործասերում:

Անձնվեր ու քաջ: Աշակերտները զինվորներին ոգևորեցին հայրենասիրական երգերով: Ձիմվորները աշակերտների հետ միասին երգեցին բանակի օրհներգը: Ձորամասում տիրում էր տոնական տրամադրություն: Երգերը կատարվում էին դպրոցի տնօրենի նվագակցությամբ: Աշակերտների ելույթից հետո ականատես եղանք

քաղաք՝ ընչելու հերոսի ծննդյան տարեդարձը: Դպրոցի տնօրենը նախապես կապ էր հաստատել Մարտունու շրջվարչակազմի ղեկավարի և Սոնթե Մելքոնյանի մարտական ընկեր, պահեստազորի փոխգնդապետ Լեոնիդ Չայրապետյանի հետ: Բոլորին ջերմ դիմավորեցին Մարտունու շրջվարչակազմի ղեկավար, պահեստազորի գեներալ-լեյտենանտ Ն. Սողոմոնյանը և Լեոնիդ Չայրապետյանը: 8-12-րդ դասարանների աշակերտները հարգանքի տուրք մատուցեցին Սոնթեի հուշարձանին: Հուզիչ էր նախկին խորհրդային դպրոցի զինղեկ Լ. Չայրապետյանի և դպրոցի տնօրեն Է. Միրզոյանի հանդիպումը: Նրանք նախկին աշխատանքային ընկերներ էին, այն ժամանակ դպրոցի տնօրենն ավագ ջոկատավար էր: Նույն ռազմահայրենասիրական գործը նրանք այն ժամանակ

Դպրոցը սերտ կապի մեջ է ՀՀ ՊՆ N գործառնախի հետ: Հունվարի 28-ին՝ Հայոց բանակի ծննդյան օրը, գործառնախի հրամանատար՝ փոխգնդապետ Ա. Մինասյանի աջակցությամբ 6-12-րդ դասարանների աշակերտները և մանկավարժները հյուրընկալվեցին գործառնախ մասնակցելու հանդիսավոր միտինգին և հանդես գալու «Ես մի զարկն եմ քո բազկի» գրական-երաժշտական կոմպոզիցիայով՝ նվիրված մեր բանակի 21-րդ տարեդարձին և Արցախի հերոս Պ. Ղևոնդյանի ծննդյան 49-ամյակին: Միտինգը բացեց գործառնախի հրամանատարի տեղակալ՝ շտաբի պետ, փոխգնդապետ Ա. Չայրապետյանը: Դպրոցի տնօրեն Է. Միրզոյանը, շնորհավորելով Հայոց բանակի տարեդարձի կապակցությամբ, ընդգծեց նրա մարտունակ և խիզախ լինելը և որ դպրոցի առաջին խնդիրը մատաղ սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելն է:

Հանդիսավոր հավաքն ավարտվելուց հետո աշակերտները և ողջ անձնակազմը եկան միջոցառումների դահլիճ՝ մասնակցելու արիության դասին:



հուզիչ տեսարանի՝ ծնողների հանդիպմանը որդիների հետ: Մեր շուրջը հավաքվեցին քաշաթաղի զինվորները: Այդ պահին զինղեկին մոտեցավ մի զինվոր: Հուզիչ էր նրանց երկխոսությունը, որում զինղեկը զինվորին բախտավոր համարեց, որ ծառայում է այն տարածաշրջանում, որի ազատագրմանն ինքն էլ է մասնակցել:



«Հայոց բանակը ստեղծվեց և կազմավորվեց պատերազմի բովանդակում, երբ վտանգված էին ՀՀ սահմաններն ու Արցախը», - ասաց Ն. Մարտիրոսյանը:

Ձորամասի ճաշարանում մեզ դիմավորեցին թիկունքի պետ՝ փոխգնդապետ Աղեկյանը և ճաշարանի վարիչ՝ ավագ ենթասպա Արմինե Մկրտչյանը: Այստեղ տիրում էր կատարյալ մաքրություն, բարձր սպասարկման կուլտուրա: Ձիմվորական ճաշը համտեսեցին ուսուցիչները, աշակերտները, ծնողներն ու նրանց որդիները: Բոլորը բարձր գնահատեցին խհարարների աշխատանքը:

Հուզիչ էին Սուշ Կնյազյանի խոսքերը՝ ուղղված էին հերոսաբար զոհված մեր զինվորներին:

Աշակերտները և Ն. Մարտիրոսյանը են Հայոց բանակի պատմության էջերը, իսկ էկրանին ցուցադրվում են տեսաֆիլմերը Հայոց բանակի կազմավորման, Մեծ



հրաձգարան՝ անցկացնելու կրակային պատրաստության դաս, որը մեր դպրոցի համար շատ կարևոր էր. քանի որ դպրոցը չունի ուսումնական զենք, օգտագործվում է յուրաքանչյուր հնարավորություն:

Էլ էին անում: ԼԳՅ ՊԲ հրամանատար՝ փոխգնդապետ Ա. Բուդաղյանի աջակցությամբ աշակերտները հյուրընկալվեցին Սոնթե Մելքոնյանի անունը կրող գործասերում: Այստեղ նրանց ուղեկցում էր քաղաքական գծով հրամանատարի տեղակալ՝ փոխգնդապետ Ա. Աղաբեկյանը, որը ներկայացրեց գործառնախի մարտական ուղին, ցույց տվեց Սոնթեի անկյունը գործառնախի տեղակալ՝ փոխգնդապետ Ա. Աղաբեկյանը, որը ներկայացրեց գործառնախի մարտական ուղին, ցույց տվեց Սոնթեի անկյունը գործառնախի տեղակալ՝ փոխգնդապետ Ա. Աղաբեկյանը:

Սպարապետի, Շուշիի հաղթանակի մասին: Հնչում են երգեր՝ նվիրված Հայոց բանակին, Շուշիին, Պետոյին, զինվորներին: Կ. Թարոյանը և Ն. Հովսեփյանը ներկայացրին Պետրոս Ղևոնդյանի մարտական ուղին, որը մեկն էր այն հայորդիներից, ով ընտրեց ինքնազոհաբերման ճանապարհը:

Եկավ հրաժեշտի պահը: Դժվար էր ժամկետը հարազատներից, ընկերներից, ուսուցիչներից, բայց նրանց սպասում էր սահմանների պաշտպանությունը:

Ձորամասի հրամանատարությունը նվերներ հանձնեց դպրոցին:

Շնորհակալություն ենք հայտնում մի զարմանալի մարդու՝ վարորդ Ա. Քարամյանին՝ մեզ անարտունջ տեղափոխելու համար:

Վերադառնալով տուն՝ ուրախ էինք և հպարտ, որ մեր սրտի խոսքը կարողացանք հասցնել հայ զինվորին:

մասում: Աշակերտներն իմացան, որ հերոսի անունը հավերժ մտցված է գործառնախ ցուցակում:

Նկատեցինք, որ գործառնախ կային նորակազմեր, և արիության դասը որոշեցինք հենց նրանց համար անցկացնել, որպեսզի ավելի լավ պատկերացնեն այն գործառնախ, որտեղ երկու տարի նրանք ծառայելու են: Աշակերտները ներկայացրին գրական կոմպոզիցիա՝ «Ես երդում տված եմ»: Նրանք գրեթե ամբողջությամբ պատմեցին Սոնթեի կենսագրությունը, նրա մեծ դերը Մարտունու պաշտպանության գործում, արտասանեցին բանաստեղծություններ Սոնթեի մասին: Նրանց ելույթն ավարտվեց հրամանատար Պետոյի երգով: Աշակերտներին հաջողվեց ներկայացնել Արցախի գոյամարտի պայծառ անուններից մեկի՝ Սոնթե Մելքոնյան-Ավոյի կենդանի կերպարը: Ավոյի մահից անցել է 22 տարի, և ժամանակը ցույց է տվել, որ չեն խամրում նրա անունն ու գործը, տարիների հետ էլ ավելի են արժևորվում:

Ձիմվորները միահամուռ ողջունեցին եղգարին՝ ասելով. «Դու լավ զինվոր կդառնաս, հպարտանում ենք քեզանով»: Դահլիճում բարձր տրամադրություն էր: Միջոցառման վերջում աշակերտները կատարեցին բանակի օրհներգը: Նրանց միացան զինվորները: Ձորամասի հրամանատարի տեղակալը շնորհակալություն հայտնեց աշակերտներին ու մանկավարժական կոլեկտիվին՝ փայլուն ելույթի և զինվորների մարտական ոգին բարձրացնելու համար, ինչը նույնպես հայրենամեծ գործ է:

«ԵՆ ԵՐՊՈՒՄ ՏՎԱԾ ԵՄ...»

Արիության դասեր են կազմակերպվել ՀՀ ազգային հերոս, Արցախի հերոս Սոնթե Մելքոնյանի ծննդյան 55-ամյակին: Հերոսի անունը կրող 12-րդ դասարանի աշակերտները (ժ. Պողոսյան, Ն. Մարտիրոսյան, Մ. Կնյազյան, Ն. Հովսեփյան, Կ. Թարոյան) դասընկ պատմության ուսուցիչ Հ. Հովսեփյանի և երիտասարդ մանկավարժների հետ այցելեցին Մարտունի

Արիության դասը կայանալու համար իրենց աջակցություն են ցուցաբերել ՀՀԳ գործիչ Դավիթ Իշխանյանը և Չորախի համայնքի ղեկավար Ա. Առուշանյանը:

«ԵՆ ՄԻ ԶԱՐԿՆ ԵՄ ՔՈ ՔԱԶԿԻ»

Ձորամասի հրամանատար՝ փոխգնդապետ Ա. Մինասյանն իր աջակցությունը ցուցաբերեց միջոցառումը կայանալու գործում՝ տրամադրելով ավտոբուս՝ տեղափոխելու աշակերտներին և ուսուցիչներին, ինչի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Այդ գործառնախ մեզ շատ հարազատ է, բոլոր կրակային պատրաստության դասերն անցկացվում են այստեղ:

Շեֆ գործառնախ անձնակազմի գծով հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Ա. Եղիազարյանը հավաստիացրեց, որ Տիգրանավանի Պ. Ղևոնդյանի անվան դպրոցը միշտ իրենց ուշադրության կենտրոնում է և հայտնեց հրամանատարության պատրաստակամությունը՝ գործունե աջակցություն ցուցաբերելու համատեղ միջոցառումներին: Նա դպրոցին նվիրեց հանձնեց:

Հարություն Հովսեփյան
Տիգրանավանի Պ. Ղևոնդյանի
անվան միջն. դպրոցի պատմության
ուսուցիչ

ԲԱՆԱԿ-ԴՊՐՈՑ

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄ ԳԵՆԵՐԱԼԸ

Անցյալ տարվանից սկսած՝ 33 պաշտպանության նախարարի խորհրդական՝ գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանը մի քանի անգամ այցելել է Բերձոր քաղաք, եղել Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում, օժանդակել ռազմագիտության կաթինետի, ինչպես և երեք դասասենյակների ու միջանցքի՝ համապատասխան դիզայնիկ նյութերով կահավորմանը, դպրոցին նվիրել համակարգչային հրաձգարան: Փետրվարի 21-ին գեներալը և Գորիսի տարածքային զինկոմ, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանը դարձյալ հյուր էին կրթօջախում: Մինչև դպրոց այցելելը՝ նրանք եղան շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանի մոտ, ձեռք բերեցին պայմանավորվածություն, որ Գորիսի զինկոմիսարիատն էլ ռազմագիտության հարցում օժանդակի շրջանի դպրոցներին: Դպրոցում բարձրդասարանցիների համար գեներալ-լեյտենանտ Սարգսյանը անցկացրեց արհու-թյան դաս՝ նվիրված Լաչինի ազատագրմանը և հետագա պաշտպանական ու ազատագրական մարտերին: Գեներալը նաև ներկայացրեց իր կենսագրությունը, որ ծնվել է ԴՄԽՂ Ղափանի շրջանի Ներքին խոտանա գյուղում, հայրն ու երկու եղբայրները չեն վերադարձել Մեծ Հայրենականին, հետագայում ստացել է զինվորական կրթություն, ծառայել խորհրդային Միության տարբեր վայրերում, արտասահմանում, մասնակցել 1969 թվականի ԽՍՀՄ-Չինաստան մարտական ընդհարումներին, իսկ 1991-ից վերադարձել է հայրենիք և ծառայության անցել Հայոց բանակում: Դիմելով դասին ներկա աշակերտներին և ուսուցիչներին՝

Մ. Սարգսյանն ասաց. «Հաճելի է, որ ձեզ հետ եմ հանդիպել. դուք երեկ նշել եք Արցախյան շարժման 25-ամյակը: Ուրախալի է, որ նահատակ-տղաների գործը շարունակում եք»: Պատմեց նաև մանրամասներ Լաչինի ազատագրման մարտերից, որոնց մասնակցել է նաև Մելիքսեթ Պողոսյանը, ով այն ժա-

1992-93 թվականներին ազատագրված Լաչինը մեծ փորձությունների դիմացավ. թշնամուն հաջողվեց նեղել միջանցքը, հյուսիսից հասնել մինչև Հոջանց ու Տղիկներ, հարավից՝ Կոռնիծորի տակ: Այս ժամանակահատվածում մեր տղաներից շատերն ընկան, բայց միջանցքը պահպանվեց: «Թշնամին 2500-ից ավելի զորք էր կուտակել տարածքում. կային նաև աֆղանցի, չեչեն, արաբ, ուկրաինացի, թուրք վարձկաններ, թուրքիստանցի վարձկան ադրբեջանցիներ, սակայն կռվի դաշտում կարևորը ոգին է, իմանալ՝ ինչի համար ես կռվում: «Այս հողի համար շատ սուրբ արյուն է թափվել գիտակցաբար, այսօր-

խաները, հաղթեն այսօր և ամբողջ կյանքում:

Բաց դասից հետո դպրոցի դահլիճում կայացավ «Եթե ուզենք, երկինքներից վար կբերենք արեգակներ» խորագրով ռազմահայրենասիրական միջոցառում՝ 9-12-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ: Աշակերտները մոտ կեսժամյա ելույթով՝ ասմունքով, պարով, թատերական խաղով և մեկ անգամ հավաստիացրին, որ իրենք են այս հողի տերը: Բացի հյուրերից և Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի ուսուցչաաշակերտական կազմից ներկա էին նաև հարևան Սուսի Սերոբ Հանյանի (նահատակ ազատամարտիկ) անվան և Բերձորի Վահան Ջատիկյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցների տնօրենները, ուսուցիչներ: Գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանի կողմից պատվոգրի արժանացան միջոցառման կազմակերպիչ, դպրոցի ուսմասվար Սուսաննա Սահակյանը, զինղեկ Սամվել Պապիկյանը, դաստիարակության գծով փոխտնօրեն Վարդուհի Հովհաննիսյանը և ելույթ ունեցող աշակերտները: Բերձորի երկու միջնակարգ դպրոցներին գեներալը հատկացրեց ազատամարտի հինգ հերոսների և ավիացիայի մասին պատմող տեսաֆիլմեր:



մանակ զինվորական կոչում չի ունեցել, սակայն եղել է լավ հրամանատար: Իսկ 1992 թվականի մայիսի 17-ին, Թորոսի խոթ կոչվող բարձունքը գրավելիս, որը մեծ դեր ունեցավ Լաչինի ազատագրման համար, մոտ երկու տասնյակ զերիներ են բռնել: Խաղաղ բնակչությանը, նույնիսկ նահանջող զորքին ճանապարհ է տրվել, որ դուրս գան և հեռանան:

վա, ձեր վաղվա լավ օրվա համար»,- ասաց գեներալը՝ դիմելով աշակերտներին և հորդորեց, խնդրեց լավ սովորել, հեռու մնալ գնալով շատացող աղանդներից: Ասաց, որ հաղթանակներ լինում են նաև խաղաղ պայմաններում՝ գիտության, մշակույթի, սպորտի, այլ բնագավառներում, և տա՝ Աստված, որ հենց այս հակամարտություններում մրցեն մեր երե-

Միջոցառմանը ներկա էին շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, կրթության բաժնի վարիչ Վարդուհի Մովսիսյանը, Քաշաթաղի զինկոմիսարիատի ներկայացուցիչներ, ազատամարտիկներ:

Ջոիրաբ ԸՈՔՈՅԱՆ
Բերձոր

ԲԱՆԱԿԸ ՄԻ ՎԵՂ ԴՊՐՈՑ Է

Փոքրը հոգածության ավելի մեծ կարիք ունի, դպրոցը՝ առավել ևս: Դա իր օրինակով փաստել է Դաշուշենի հիմնական դպրոցը: Պետական ձեռքը հավասարաբաշխ է, բայց սպորտում են խնդիրներ, ծառանում անելիքներ, որոնք լուծել ու հաղթահարել է հնարավոր սրտացավ աջակցողի շնորհիվ: Բարեբախտաբար, այդպիսի անշահախնդիր օժանդակությունն առկա է այս համայնքի դպրոցում: Բոլորն են ակնատես եղել տարիներ շարունակ դպրոցի հովանավոր կազմակերպության ներդրմանը: Հավանաբար, նման դեպքերում են ասում. «Դեռ խոսքը գետին չընկած՝ կատարվում է»: Իրոք, բավական է մի անգամ ակնարկել, և՛ դպրոցի նորոգմանը և՛ պետք աջակցել՝ խնդրեմ, մեկ դասասենյակ նորոգելու շինանյութ է առկա՝ նորոգվում են մի քանիսը՝ հավելած մարգարտիկներ, միջանցքը, դպրոցի դռներն ու լուսամուտները... Ձմեռվա ցախն է պետք կտրատել, տեղավորել կամ տեղափոխել՝ խնդիր չկա, ձմռան ջեռուցումն ապահովված է: Դպրոցին ջո՛ւր է պետք՝ կկառուցվի աղբյուրը: Դպրոցը հոբելյանական տե՛սք պետք է ստանա՝ ներքին բոլոր հարդարանքները նախագծված են և ճաշակով կատարված... Ավելին՝ դպրոցի լեռնալանջ-բակը կվերածվի ծաղկանոցի... Արվել են, և կյանքին համընթաց անվախճան են անելիքները, քանզի սակրավորների գործնասի և Դաշուշենի Վ. Օվյանի անվան դպրոցի կապն ընդմիջտ անխափան է, ավանդույթ դարձած: Չէ՛ որ սակրավորները տեսնում են, որ իրենց գործնասի հրամանատարը՝ փոխգն-

դապետ Ռաֆայել Գալստյանը, այդ ամենն անում է սրտի թելադրանքով, չի զլանում, հակառակը՝ կարևոր է համարում իրենց անձնական մասնակցությունը դպրոցական ցանկացած գործի ու միջոցառման: - Մեր և դպրոցի կապը շատ կարևոր է,- մեկնաբանում է Ռ. Գալստյանը: Բանակն ինքը մի վեհ դպրոց է, իսկ այ, գործնասը՝ մի յուրօրինակ դասարան, որն ընդհանուր դպրոցի հետ առնչվելիս էլ սովորելու և սովորեցնելու բան ունի: Իմ պաշտոնական խնդիրներում անձնականի պես մշտադրո՞ւմ է հայի կերպարին բնորոշ մարդ ձևավորելու ծրագիրը կյանքի կոչելը: Իսկ հայ մարդը և՛ կյանքում, և՛ պատերազմում մարդ է ու մարտիկ, այլ կերպ՝ մարդ-մարտիկ. առաքինի ու արարող, ազնիվ ու լույսի առաքյալ, հայրենի հողով գորացող, հանուն հայրենիքի անձնագրի, անենակարող ու վեհասլաց... Այս երկու դպրոցների կապը լոկ տնտեսական խնդիրների լուծմանը չի ծառայում, առևերույթ է այդպիսին: Իսկ ցանկալիին հասնելու կարևոր ճանապարհ է հոգևոր հողի ստեղծումը: Վատը որքան էլ վարակիչ է, միևնույն է, վատ մարդն էլ հոգու խորքում ցանկություն ունի և առերես ձգտում է լավը երևալ, անգամ ընդօրինակել արմատակալած լավին: Դա յուրաքանչյուրիս ներքին ձայնն է, որ սպասում է հարմար ուղղորդման և առկա վատը հաղթահարելու կամքի ծլարձակմանն ու հաստատմանը: Ես այս խնդրի իրականացման կարևորագույն միջոց է համարում եկեղեցին: Ահա թե ինչու նախատե-

սել է գործնասի տարածքում մատուռ կառուցել, իսկ մինչ այդ հոգևոր ծառայողին հաճախ հյուրընկալել: Հոգևոր խաղաղություն, իրական պաշտպանվածություն, անասանության զգացում պետք է ապրի իր գործնասի սակրավոր դարձող ամեն մի զինվոր, ինչպես նաև՝ այդպիսի զավակ ունեցող ամեն մի հայ: Սա պետք է հատկապես Արցախի նման երկրի բակչությանը՝ խոցված ու չդարձնված վերք ունեցող: - Իմ երազանքը,- շարունակում է Ռ. Գալստյանը,- Արցախն իր հոգու պես բացված, չեն ու շոայլ, անմիջական ու առնչմանը տեսնել է: Դրա համար ամենքս էլ մասն ունենք ներդրելու բարու արահետում: Իսկապես, դա չի լինի, եթե որևէ բացատրվ չենք անցել ու չենք ապրել արահետով գնալու դժվարությունն ու հաղթահարելու բերկրանքը, այդ արահետն այլոց կողմից ուղի դառնալու հնարավորության խանդավառությունը, չենք հասկանա ոչ մի խորհուրդ, հետևաբար, լույսին հասն չենք լինի: Մեր ժողովուրդը Վահագնի լույսի ծնունդ է: Մեր խնդիրն է ինքներս մեզ շարունակ դաստիարակելով՝ զբաղվել նաև մեզ վստահվածների դաստիարակությամբ. մարդ իսաստիարակենք, արմատից ջուր խմող մարդ: Եկեղեցին նա կարևորում է, քանի որ ժողովուրդների գոյությունը, ինչպես մարդկության պատմության մեջ՝ մեր կյանքը, մրցակցության արդյունք է: Հողի յուրաքանչյուր գուղձ մեր նախնյաց և հարազատների արյունով է ներծծված: Այսինքն՝ այս հողը սուրբ է: Սա պետք է գիտենա ամեն մի սերունդ: Սրբու-

թյունները ճանաչող, գնահատող, դրանցով ապրող մարդն անկոտրում է, որովհետև նա ոգի առած է: Ոգևորված մարդը մարտունակ է: Ոգևորված են հոգևոր-արժեքային համակարգ ունեցողները: Մենք ունենք, պետք է պահպանենք, չնայած այդ լույսը միշտ բորբոքում է արյունարբունների անխոթակը, սրում ժանիք-թաթաղանները: Մարդն առանց հավատի ոչնչի չի հասնի՝ առանց առաքինություն, բարոյականություն սերմանող հավատքի: Մենք դրա կրողն ենք: «Ես ուզում եմ, որ այդ արժեքը մեր մեջ ամփոփված չմնա, այլ կենսակերպի վերածվի: Իսկ դա հայի համար դժվար չէ. այն Հայկ նահապետն ու նրա հետնորդներն անմահացող փոխանցել են սերնդեսերունդ, և մենք պարտավոր ենք դրան հավելել մեր ունեցածը և անկողոպտելի ժառանգության պես թողնել, տալ, նվիրել, կտակել, բորբոքել... կրել որպես ասպար...», - բարձրաձայն մտորում է հրամանատարը: Պետություններն իրենց հպատակությունն էին հայտնում Տիգրան Մեծին ոչ միայն ռազմական պաշտպանվածության ձգտումով, այլև լույսի մեջ հայտնվելու ակնկալիքով. Տիգրանի ազնվությունը նրանց կյանքի և գոյության երաշխիքն էր: Նա չէր բռնամուտ, չէր զավթում, չէր ստիպում իր լեզվով խոսել, իր աստվածներին պաշտել... չէր զրկում ազգային ինքնությունից: Ժամանակները չեն վերադառնալու, բայց երևույթներն ու դեպքերը կարող են կրկնվել: Ծովից ծով... մենք էլ պետք է ծնենք այսօրինակ ռազմիկներ, բարոյականության մեջ ապրենք, և քրիստոնեական պատգ-

Անահիտ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՑ

«ՍՈՒՄՈՒՅԻԹԻ» ՀԱՄԱՐ ԴԵՌ ՊԱՏԱՍԽԱՆ ԿՏԱՆ

Ժողովուրդների պատմությունն այլ բան չէ, քան իրենց Գոյամարտի, իրենց հաղթությունների ու պարտությունների պատմությունը:

Գ. ՆՏՂԵՒ

Արցախահայության համար Ադրբեջանից ազատվելու և մայր հայրենիքին վերամիավորվելու հարցը երբեք չի մարել: Միացող կրակից բռնկվեց բոց, և արցախցին դիմեց պայքարի բոլոր միջոցներին՝ սկսած սովորական բողոքագրերից ու համախոսականներից մինչև իր լավագույն զավակներին զոհասեղան բարձրացնելը, մինչև պատերազմի դաշտում զենքի գործընթացը այս արևի տակ իր գոյության բնական իրավունքի հաստատումը: Այս ամբողջ ընթացքում հայոց ազգային-ազատագրական միտքը չլուծվող հիմնահարցի առթիվ պատվել է միայն մի կարգախոսի շուրջ. «Ղարաբաղը մերն է»: Ղարաբաղը ասելով էլ սահմանափակվել ենք այն փոքրիկ հողակտորով, որ օտար իշխողների «ողորմաժողովար» ընդունվել է հայկական, օտարի ձեռքով դարձել ինքնավար մարզ: Իսկ մենք ուրախ ենք եղել թեկուզ դրանով, մինչդեռ այդ ժամանակ մեր տեսադաշտից դուրս է մնացել մի ամբողջ տարածք՝ Հայոց Արևելից կողմը՝ իր տարածքային ամբողջակամությանը, իր հազարամյակների պատմությանը ու մաքառումներով: Սա այն տարածքն է, որն ըստ հռոմեական գործարար Լուկոլլուսի, Կովկասի շողողուն սուրն էր, ըստ Լեոյի՝ պատմեչ Հայաստանի, ըստ Գորդեցկու՝ Հայաստանի միջնաբերդը:

Խորհրդային իշխանության տարիներին Ադրբեջանի կազմի մեջ մտած հայկական մարզերում տար-

բեր ձևերով ու մեթոդներով շարունակվել է ցեղասպանությունը և հասել մինչև սուևագայիթյան ոճրագործություն: Այն ժամն ու դժվար օրերին, երբ արցախցիները փորձում էին իրենց պայքարը շարունակել խաղաղ, քաղաքակիրթ ձևով, Ադրբեջանում գերադասեցին դրան պատասխանել բիրտ ուժով ու ահաբեկչությամբ:

1988թ. փետրվարի 27-29-ը Բաքվից ընդամենը 25 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում ապրող 18 հազար հայերի նկատմամբ իրագործվեց եղեռնագործություն՝ այն մեղքի համար միայն, որ հայ են: Երեք օր լրիվ անպաշտպան մնացած հայերից Սումգայիթում սպանվել են ավելի քան 400, խեղդվել ու տուժել՝ մոտ 1000 հոգի: Թաքցնելու համար դիակները տարել են Բաքու, իսկ շատերն էլ նետել ծովը: Այս ամենին դեռևս քաղաքական ու իրավական գնահատական չի տրվել, իսկ այդ հրեշավոր չարագործության ոգեշնչողներն ու կազմակերպիչները խուսափել են պատասխանատվությունից: Այդպիսի կազմակերպված զանգվածային ոճրագործություններով նպատակ էր դրվում երկրի ղեկավարությանը ցույց տալ, թե ինչի կհանձնվեցին հարցի դրակներ լուծումը: Սակայն ահաբեկման, պրովոկացիաների և բռնության քաղաքականությունը չկարողացավ Ղարաբաղի ժողովրդին ստիպել շեղվելու իր ընտրած սահմանադրական ուղուց: Տեղին է հիշել Սեժն Փարամազի խոսքերը. «Դուք մեր մարմինը միայն կրնաք կախել, իսկ մեր գաղափարը՝ ոչ»:

Եթե «սումգայիթին» միացնենք

«բաքուն» և հայերի դեմ կատարված խժժությունները, պարզ կդառնա, որ այն դարձել է պետական քաղաքականություն: «Սումգայիթը» նախօրոք պլանավորված վայրագություն էր, որը նպատակ ուներ վիժեցնել Ղարաբաղի հիմնախնդրի լուծումը: Պատահական չէր Բուհիաթովի այն հայտարարությունը, որում զգուշացվում էր, որ Ադրբեջանում կկազմակերպվի 1915 թվական: Իրոք, Ադրբեջանը՝ այդ երկրորդ թուրքիան, դարձավ խորհրդային ժամանակաշրջանի հայոց նոր գերեզմանոց:

Սումգայիթի ջարդերից անցել են տարիներ, որոնց ընթացքում Ադրբեջանը բազմիցս փաստել է, որ իր երկրում ժողովրդավարությունը զուտ արտաքին չպար է և Եվրոպային հաճոյանալու կեղծ փորձ: Ադրբեջանն իր ավագ եղբոր նման ոչ միայն չի ցանկանում ճանաչել իր պատմության արյունոտ էջերը, այլև ի ցույց աչխարհի՝ շարունակում է խաղաղ չհաջողված, ոչ մի ստանդարտում չտեղավորվող անմեղ գոհի դեր: Դժբախտաբար, այս ոգով են կրթվում նաև ժամանակակից ազերիները՝ անհանդուրժողականությամբ և ատելությամբ լցված ոչ միայն հայերի, այլև ազգային մյուս փոքրամասնությունների հանդեպ:

Այսքանով համոզեմ, հայոց պատմությանը ավելացավ 1915թ. ոճրագործի ձեռագրով գրված ևս մի արյունոտ էջ: Ժամանակն է նորից հիշել ցեղին սրտին. «Ուժեղը նա՛ չէ, որի հաղթությունները ռազմական լինելով, բարոյական չեն»:

«Սումգայիթը» մեծ ցնցում էր մեզ համար: Մենք դիմացանք այդ ցնցումին, քանզի «անբարոյական

ու կորած է մի ժողովուրդ, որ հանուն իր գոյության անընդունակ է խոր ցնցումների» (Նժդեհ):

Պատմությունը ցույց է տալիս, որ քաղաքակրթության ամենաստորին աստիճանում գտնվող պետություններում անգամ ամեն մի հանցագործություն ստացել է իր արժանի գնահատականը: Ինչո՞ւ՞ բացատրել, որ խորհրդային կայսրությունը ոչ թե դատապարտեց Ադրբեջանին, այլ նույն ժամանակաշրջանում սոցիալիստական մրցություն երիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության բնագավառում հաղթող են ճանաչվում Սումգայիթն ու Ադրբեջանը, երբ դեռ չի չորացել Սումգայիթում թափված արյունը: Ինչպիսի՞ անհեթեթություն... Անհասկանալի է, թե ինչպես կարելի է 20-րդ դարում պաշտպանության տակ առնել մարդասպանությունը:

Մի՞թե սա չի խոսում այն մասին, որ այստեղ որոշիչ ազդակը Ադրբեջանի նավթն է, որով էլ Թուրքիան և Ադրբեջանը նավթի օգտին քարոզչություններ են անում, խոստումներ տալիս ու քաղաքական ճնշումներ կատարում: Այս իրողության լույսի տակ ի՞նչ քաղաքական գնահատական:

Մի քանի տասնամյակ առաջ սպիտակամորթ դեսպաններ ուտող աֆրիկյան նեգրերն անգամ ձեռք են բերել ազատություն և անկախություն:

Մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար դեռ պատասխան կտան Թուրքիան և Ադրբեջանը՝ որքան էլ «ժամն ու թանկ լինի նավթը հայի արյունից»: Պետք է կանխել ահագնացող չարի-

քը և մարդկությանը փրկել ազերու մի շղթայական ռեակցիայից: Երբ գործողության մեջ են դրվում ջարդն ու ոչնչացումը անգոր ժողովրդի կործանումով, ինչպե՞ս փրկել աշխարհը:

Սումգայիթի դառն իրողությունից անցել է 25 տարի: Մենք, հակառակ ազերիների սպասելիքների, ավելի ենք համախմբվել, ժամն ու ամենագոհ պայքարում նվաճել ենք սեփական ազատությունն ու անկախությունը:

Հավերժության իր երթում մենք մեր պատմական բախտի բեռը տարել ենք մեզ յուրահատուկ հպարտությամբ ու ոչ թե շղջանցել, այլ անցել ենք այդ ոլորանները՝ մեր հաղթական աղաղակներով լցնելով հայոց սարերն ու ձորերը:

Ժամանակին ի մի բերելով հայ ժողովրդի անցած ուղին՝ Գարեգին Նժդեհն ինքն իրեն հարց է տվել. «Ո՞վ է մեղավոր՝ երկրի աշխարհագրական դիրքը, քրիստոնեական եվրոպացի, մահմեդական Ասիացի, թե՞ ճակատագիրը»: Այստեղ կա մի փոքր ճշմարտություն, բայց դրա փոխարեն՝ հոյակապ առավելություններ: Զե՞ որ մեր բարձրակարգ անառիկ է, մեր լեռները՝ անխոցելի պատնեշներ: Ու մենք պայքարեցինք՝ գիտակցելով մի այլ գաղափար. «Իր երկրի սահմաններում պարտվող ժողովուրդն իրավունք չունի խոսելու անկախ հայրենիքի մասին»: Ու մենք հաղթեցինք:

Գայանե ՄԱԹՎՈՍՅԱՆ
Զորավանի միջև. դպրոցի
ՄԱԿԿ փնտրելի փեղակալ

ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԶՈՐԱՎԱՆՈՒՄ

Փետրվարի 20-ին Զորավանի միջնակարգ դպրոցում կազմակերպվեց զեղեցիկ միջոցառում՝ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման 25-րդ տարեդարձին նվիրված: Դպրոցի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվներից բացի, մասնակցում էին ԼՂՀ ՊԲ 2-րդ ՊՇ սպաներ ու զինծառայողներ:

«Զարթոնք» մանկապատանեկան կազմակերպության անդամների հանդիսավոր հավաքից հետո բացման խոսքով հանդես եկավ դպրոցի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրեն Գայանե Մաթևոսյանը: Ողջունելով ու շնորհավորելով բոլորին Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարի 25-րդ տարեդարձի կապակցությամբ՝ նա ասաց. «Փետրվարյան խաղաղ ցույցերը նոր էջ բացեցին Արցախյան ազատագրական շարժման տարեգրության մեջ: Հայրենիքի հողն ու ջուրն իր արյունով ներկած հայ ժողովուրդը կարող է լեռներ խորտակել, գետերի հուն փոխել՝ միայն ազատություն և պահպանել հայրենիքի համար: Անվեհեր հայրողիները պայքարել են ու կպայքարեն, քանի որ արդարացի է մեր պահանջը, իրավացի՝ մեր դատը և սրբազան՝ մեր պարտքը: Այսօրվա Արցախը 1988թ. փետրվարյան շարժման արդյունք է»: ԼՂՀ օրհներգի հնչյունների ներքո միջոցառումը՝ նվիրված Արցախյան շարժման 25-ամյակին, համարվեց բաց: Հայրենիքի փրկության համար հայ քաջորդիներն արհամարհեցին մահը, գնացին կռվի դաշտ՝ գիտակցելով, որ ազատությունն ու

անկախությունն արյունով են ձեռք բերվում: Մեկ րոպե լռությամբ հարգվեց հայրենի հողի համար զոհված հայրողիների հիշատակը:



Զեկուցումով հանդես եկավ դպրոցի տնօրեն Սլավիկ Արզումանյանը, ով, կարևորեց օրվա խորհուրդը՝ ասելով. «Այսօր բոլորս հուզված ենք, միևնույն ժամանակ հպարտ, քանի որ մեկ անգամ ևս վերապրում ենք մեր քառորդարյա անցյալը, վերաիմաստավորում մեր ներկան, արժևորում մեր ապագան»:

Ս. Արզումանյանը դպրոցի մի խումբ աշակերտների պատվոգրեր հանձնեց, որոնց նրանք արժանացել են վերջերս դպրոցում կազմակերպված շախմատի մրցումներում: Ընդհանրական ելույթով հանդես եկավ N

զորամասի մայր Լեռնիկ Աղաբեկյանը, ով մեր բանակի հերոսական պատմությունը ներկա և հետագա բոլոր սերունդների համար հայրենասիրության վառ դաս համարեց, խոսեց այսօրվա հզոր, մարտունակ բանակի առկայության մասին և հույս ու հավատ հայտնեց հայրենիքի պաշտպանի վերաբերյալ:

«Գալիք դարերի հայը պիտի երախտապարտ լինի այն սերունդին, որ տեր կանգնեց մեր հայրենիքին, բազկի մի հարվածով հեռացրեց չարը Արցախ աշխարհից»: Նրա համոզմամբ՝ մեր վաղվա օրը հուսալի է, և այդ հավատը գալիս է այն բանից, որ մեծամուն է մի սերունդ, որը պատրաստ է անհրաժեշտության դեպքում ռազմական առճակատմամբ պաշտպանելու, տեր կանգնելու իր հայրենիքին:

«Թագավորը նա է, ով իշխում է, ուստի մենք պետք է լինենք թագավոր սերունդը». այս գաղափարն էր շոշափված դպրոցի աշխարհի դի նախագահ Տաթև Դովսեփյանի ելույթում:

Այսօր Զորավանի միջնակարգ դպրոցում, որպես «Զարթոնք» մանկապատանեկան կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, աշխատում է

Զարժման առաջամարտիկներից մեկը՝ Սիլվա Բալայանը: Մարդ, ով պարզատրվել է «Անբասիր ծառայության համար», «Վազգեն Սարգսյան», «Մարտական գործողության համար», «Մայրական երախտագիտություն» մեդալներով ու պատվոգրերով:

Իր շնորհավորական ելույթում Ս. Բալայանը մասնավորապես ասաց. «Ուտքի ելավ հերոսական Մարտունու շրջանը և մինչև վերջ պահպանեց իր հերոսական ոգին: Վկան՝ մի թիզ հող անգամ չսովինք թշնամուն: Մեր նվիրյալների շնորհիվ հաղթանակած դուրս եկանք այդ դաժան պատերազմից՝ ապացուցելով ողջ աշխարհին, որ ունակ ենք սեփական ազատությունը սեփական ուժերով նվաճել»:

Միջոցառումը, որը վարեցին 10-րդ դասարանի աշակերտներ Արամ Քոչարյանը և Նուրեն Դուլյանը, համեմվեց 6-7-րդ դասարանների աշակերտների ասմունքով, ազգային, ռազմահայրենասիրական երգերով ու պարերով և 12-րդ դասարանի աշակերտների կողմից ներկայացված զինվորական խաղերով:

«Շրջե՛ք Արցախում և գտնե՛ք այն բոլոր սրբավայրերը, ուր մեր ազատամարտիկների արյունն է թափվել, գտնե՛ք հողի յուրաքանչյուր մասնիկ, որ պարունակում է այդ արյունը և հիշենք, որ այդ հողը մեր նախնյաց ժառանգությունն է, որ հայրենիք է: Պահենք այդ սբությունը հպարտությամբ ու տանք մեր որդիներին...»,- միջոցառումը եզրափակեց Գայանե Մաթևոսյանը:

1988թ. ՓԵՏՐՎԱՐ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՉՎԱՅԻՆ-ԱՉՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ԷՋ

Ձեկուցում՝ նվիրված Արցախյան ազգային-ազատագրական պայքարի, Ղարաբաղյան շարժման 25-րդ տարեդարձին

Դժվար է հավատալ, որ դարեր շարունակ պետականությունից զրկված քրիստոնեական հավատքի տեր մի ժողովուրդ, շրջափակված լինելով իսլամ դավանող երկրներով, երբևէ կկարողանար պահպանել իր ազգային արժանապատվությունն ու սովորությունները, հավատքը, պետական մտածողությունը, և դա այն դեպքում, երբ դրանցից թուրքալեզու երկու հարևաններ իրենց պետական քաղաքականության հիմքում դրել են հայությանը բնաջնջելու ծրագիր:

Փառք ու պատիվ բոլոր նրանց, ովքեր հայ ժողովրդի պատմության քառուղիներում թե՛ զենով, թե՛ գրչով, թե՛ հավատքով կարողացան մեծ փոխանցել խոցված ու բզկտված, վերքերից չհալածված մեծ Հայաստան աշխարհի գոնե մի փոքր մասը:

Այդ փոքր, սակայն թանկ հայրենի հողի վրա, որ լցված էր Մեծ եղեռնից մազապուրծ փրկված տանջահար և սոված փախստականներով, անցյալ դարի 20-րդ թվականի վերջին ստեղծվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Նոր էր սկսվել պետականաշինության իր նախնազած քայլերը, երբ վրա հասան ռուսական հեղափոխությունը միջազգայնացնելու և դեպի Արևելք տարածելու լեհիմյան ցնորքի ալիքները: Երբևէ պետականություն չունեցած և որպես ազգ այդպիսին չճանաչված թուրքալեզու բռնակալական ցեղակույտը ռուսական հեղափոխության դրոշի ներքո նախ ձեռք բերեց պետականություն, հետո՝ հեջ նրանց վերապահվեց իրավունք՝ ռուսական կարմիր բանակի կազմում իրականացնելու հեղափոխությունը Հայաստանի Հանրապետության վրայով դեպի Թուրքիա տեղափոխելու բոլշևիկների խելացնոր «առաքելություն»:

Բազմաթիվ ցավերից տանջահար եղած արցախահայության ճնշող մեծամասնությունը մեծ հույսեր կապեց խորհրդային կարգերի հետ: Բայց այն երկարատև չեղավ: Ղարաբաղն իրավական ուժ չունեցող Անդրկովկասի կոնֆեդերատիվ հանրապետության կոմունիստական կուսակցության բյուրոյի որոշմամբ հանձնվեց Ադրբեջանին: Վերջիններս ռուսական տոտալիտար համակարգի պայմաններում երկրամասում սկսեցին իրականացնել սպիտակ եղեռն: Այսպես օրինակ, թե՛ խորհրդային իշխանության հաստատման սկզբին կազմավորված Ղարաբաղում բնակվում էր 157800 մարդ, որոնց շուրջ 150000-ը կան բնակչության 94.0 տոկոսը կազմում էին հայեր, ապա Շարժման նախօրեին հայերի թվաքանակը համարյա թե մնացել էր նույնը, իսկ ադրբեջանցիները կազմում էին բնակչության 25 տոկոսը:

Վտանգված էր արցախահայության գոյատևումը մայր հողում: Գիշտ է. մտավորականության որոշ ներկայացուցիչներ, արհամարիելով ամեն տեսակի բռնություն ու ճնշում, ժամանակ առ ժամանակ խիզախում էին բողոքի ձայն բարձրացնել՝ հանուն պատմական արդարության վերականգնման, սակայն, ցավոք, ամեն ինչ ավարտվում էր ռեպրեսիաներով, կամ լավագույն դեպքում մտավորականության այդ սերունդը թողնում ու հեռանում էր Արցախից:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի տարեգրության մեջ ոսկե էջերով պետք է առանձնացնել Արցախյան ազգային-ազատագրական պայքարի՝ անցյալ

դարի 80-ական թվականների վերջերին բռնկված Ղարաբաղյան շարժումը:

Ժողովրդական ընդվզումի և պայքարի արտահայտման հզորագույն այդ պատմական իրադարձությունները տարբերվում են նմանատիպ ձևերից առաջին հերթին նրանով, որ վերջապես հաջողվեց հայ իրականության մեջ լուծել կարևորագույն մի քանի խնդիրներ:

Նախևառաջ, դարեր շարունակ պետականությունից զրկված հայրենիքի մի փոքրիկ մասում պատմական արդարության շնորհիվ հաջողվեց ստեղծել երկրորդ հայկական պետական կազմավորումը:

Հատկապես հայերիս համար ոչ պակաս կարևորություն է իրենից ներկայացնում այն իրողությունը, որ դարեր շարունակ պետականությունից զրկված և հարևան երկրների կողմից մասնատված հայրենիքի մի մասում ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ հայր կարողացավ ազատագրել պատմական հայրենիքի թեկուզ և՛ չնչին, սակայն մեծ արժեք ունեցող մասը:

Եվ վերջապես, Ղարաբաղյան շարժման շնորհիվ համախմբվեց աշխարհով մեծ սփռված հայությունը և, ի դեմս Հայաստան-Արցախ-Սփյուռք օրգանական միասնության, այսօր արդեն հնարավոր է դարձել լուծել ազգային ու պետական իմնահարցեր և տեր կանգնել հայոց պահանջատիրությանը:

Պատմական կարճ ժամանակաշրջանի՝ ընդամենը 25-ամյա բարձունքից նայելով և արժևորելով 80-ական թվականներին բռնկված Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ողջ ժամանակահատվածը, անհրաժեշտարար առաջին միջանկյալ 88-ի փետրվարյան իրադարձությունները: Պատեն առիթ էր պետք, որպեսզի արցախահայությունը վերջապես իր ուսերից դեն նետեր թուրք-ազերիների լուծը, հակադրվեր խորհրդային կայսերապաշտ ու տոտալիտար համակարգի մվաստացուցիչ պայմաններին: Եկավ դարերով կուտակված ցատկուն ու վրեժխնդրությունն արտահայտելու պահը:

Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը հնարավորություն և շանս տվեց հայությանը՝ իրականացնելու վաղեմի երազանքը: Անհրաժեշտ էին Շարժման առաջամարտիկներ, որոնց ուսերին պետք է ընկներ ազգային-ազատագրական պայքարի կազմակերպումը: Եվ գտնվեցին, ի հայտ եկավ այն մտավորականների ջոկատը, որոնք ծառու եղան տասնյակ տարիներով դարանակաված խորհրդային հրեշտի դեմ: Մայր Հայաստանում և Արցախում ստեղծվեցին նախաձեռնող խմբեր: Նրանց էր վիճակված Մայր Հայաստանին Արցախի վերամիավորման պահանջատիրական շարժման կազմակերպման գործը: Անհրաժեշտ էր Շարժումը դարձնել լայն զանգվածների սեփականությունը, համոզել մարդկանց, որ միայն հրապարակային ելույթներով, հանրահավաքներով ու ցույցերով է հնարավոր հասնել հաջողության և տեր կանգնել արցախահայության պահանջատիրական պայքարին: Միմիայն մարդկային հոծ զանգվածների փետրվարյան հրապարակային ցույցերն ու ելույթները կտրեցին Շարժմանը սոցիալ-տնտեսական բնույթ վերագրելու՝ Կենտրոնի մտահղացումները:

Համոզված կարելի է մատնանշել, որ փետրվարյան հրապարակային հանրահավաքներն ու բազմամարդ ցույցերը ստիպեցին ռուս-ադրբեջանական ուժային կառույցներին հրաժարվել տվյալ պահին ուժ գործադրելու մտադրությունից:

Օրվա խորհուրդը (փետրվարի 22) հուշում է, որ անդրադարձ կատարվի և ուշադրություն հրավիրվի բուն Ասկերան շրջկենտրոնում փետրվարին տեղի ունեցած իրադարձություններին. նկատի ունենանք նաև, որ Ասկերան համայնքի ավագանու որոշմամբ փետրվարի 22-ը հռչակված է որպես քաղաքի Վերածննդի օր:

Ի սկզբանե կարևոր է առանձնացնել ու զննատել նախաձեռնող խմբի ղեկավար Սլավիկ Առուշանյանի, անդամներ Կոմիտաս Դանիելյանի, Սլավիկ Միրզոյանի, Մարատ Հակոբջանյանի, Ալբերտ Ավանեսյանի նպատակալաց գործունեությունը, որոնց հաջողվեց նախ 1987թ. աշնան ամիսներին կազմակերպել պահանջատիրական ստորագրահավաքներ և այն հասցնել Մոսկվա՝ կոմկուսի Կենտրոնական կոմիտե: Շատ կարևոր է փետրվարի 1-ի՝ շրջանի մի խումբ կուտոնտեսությունների ղեկավարներին ու մտավորականներին, ինչպես նաև առաջամարտիկներ Իգոր Մուրադյանի և Վաչե Սարուխանյանի մասնակցությամբ Նորագյուղում տեղի ունեցած գաղտնի խորհրդակցությունը, որտեղ ոչ միայն քննարկվեցին Արցախյան շարժման անելիքների մասին հարցեր, այլև, որ ամենակարևորն էր, ընդունվեց որոշում մոտակա օրերին կայանալիք կուտոնտեսությունների հաշվետու-ընտրական ժողովներում քննարկել և հավանության արժանացնել Սլավիկ Առուշանյանի կողմից ներկայացված՝ Արցախը խորհրդային Հայաստանին վերամիավորելու մասին ղեկավարացիան:

Փետրվարի 12-ին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի ղեկավարության պահանջով մարզի բոլոր շրջաններում հրավիրվեցին կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովներ, որոնցում նախատեսվում էր հավանության արժանացնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի մասին ԽՍՀՄ կոմկուսի Կենտկոմի պետմի կայացրած որոշումը: Այնտեղ Շարժումը որակվում էր որպես մի խումբ ծայրահեղականների ակտիվ ձեռնարկված սադրիչ գործողություններ, որոնց նպատակն է խաթարել ժողովուրդների անխախտ բարեկամությունը: Ինչպես Ասկերանում, այնպես էլ մարզի այլ շրջկենտրոններում շարժման ակտիվիստներին հաջողվեց այդ օրը ոտքի հանել բնակչությանը և հրապարակավ պահանջ ներկայացնել ժողովականներին՝ հրաժարվելու ներկայացված որոշմանը հավանություն տալուց:

Ադրբեջանից Արցախ ժամանած էմիսարներն իրենց դիրքերն ավելի ամրացնելու նպատակով ցանկություն հայտնեցին փետրվարի 13-ին կուսակցության մարզկոմի շեքը հրավիրել կուսակցության մարզային և շրջանային բյուրոների անդամներին և նրանց ներկայացնել կոմկոմտ պահանջներ՝ նախ հավանության արժանացնել կուսակցության վերադաս մարմնի որոշումը և երկրորդ՝ Շարժումը ճնշելու ուղղությամբ ձեռնարկել պահանջվող քայլեր: Նման ստորացուցիչ պահանջների դեմն առնելու միակ ճանապարհը Լեռնի՛ն

անունը կրող հրապարակում հանրահավաքի կազմակերպումն էր: Առանց չափազանցնելու և ոչ ոքի վիրավորելու ցանկանում են հայտարարել, որ այդ մտահղացումը կայացվել է փետրվարի 12-ի երեկոյան՝ «Կարմիր դրոշ» շրջանային թերթի խմբագրությունում, թերթի խմբագիր Կոմիտաս Դանիելյանի և Սլավիկ Առուշանյանի առանձնազույցի ժամանակ: Սեղմ ժամկետում հանդիպումների և հեռախոսազանգերի միջոցով հնարավոր եղավ համոզել սովխոտեխնիկումի տնօրեն Դենիս Զաքարյանին, մարզային ավտոտրանսպորտային միավորման արհմիութենական կազմակերպության նախագահ Վաղիմիր Մելքունյանին, Շարժման առաջամարտիկներ Արկադի Կարապետյանին և Կարեն Արզումանյանին, մանկավարժական ինստիտուտում գաղտնի գործող երիտասարդական ընկերակարական կազմակերպության անդամներին, որպեսզի փետրվարի 13-ին Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում կազմակերպեն հանրահավաք: Այդ հանրահավաքի հաջողությունից էր կախված հետագա գործողությունների ընթացքը, այդ թվում նաև, փետրվարի 20-ին տեղի ունեցած ժողովրդական դեպուտատների 20-րդ գումարման մարզային խորհրդի 4-րդ արտահերթ նստաշրջանի կայացրած պատմական որոշման ընդունումը:

Փետրվարն ասկերանցիներիս համար կարևորվում է նաև 22-ի իրադարձություններով: Չկարողանալով հաջողություններ արձանագրել, այսպես ասած, դիվանագիտական ճանապարհով, ստանալով Կենտրոնի լուռ համաձայնությունը, Ադրբեջանի իշխանությունները դիմեցին Ղարաբաղյան շարժման ուժ գործադրելու միջոցով լռեցնելու քաղաքականությանը: Առաջին լայնածավալ հարձակումը կատարվեց Ասկերանի ուղղությամբ: Ասկերանցիների և հարևան բնակավայրերից ժամանած մի փոքր խմբի, միլիցիայի Ասկերանի շրջանային բաժնի աշխատակիցների հետ միասին հաջողվեց կանգնեցնել տարաբնույթ սաղը զենքերով զինված տասնյակ-հազարների հասնող թուրք ելուզակներին: Օրեր անց պարտված զազանն իսկական եղեռն կազմակերպեց Սունգայիթ հայաշատ քաղաքում և էլի մի շարք հայաբնակ բնակավայրերում: Փետրվարի 22-ը Ասկերանի համայնքի ավագանու որոշմամբ ընդունվեց որպես Ասկերան քաղաքի Վերածննդի օր:

Իսկ ինչ եզրահանգումների եկավ արցախահայությունը փետրվարյան իրադարձությունների լույսի ներքո.

1. Գորբաչովյան վերակառուցման քաղաքականության ֆոնի վրա պարզորոշ ընդգծվեց, որ ձեռնարկվող ժողովրդավարական կիսատապաշտ քայլերն ի գորու չեն այլևս կանգնեցնելու խորհրդային կարգերի փլուզումը, և ուր-որ է՝ այն պետք է կործանվի: Տոտալիտար այդ համակարգում արդեն լուծված էր համարվում, այսպես կոչված, ազգերի ինքնորոշման լեհիմյան սկզբունքի հիման վրա ազգային պետական կազմավորումների հարցը: Ենթադրաբար կործանվող համակարգը արցախահայության ճակատագիրը ընդմիջու պետք է թողներ տրիպլետող Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության կամքից կախված:

2. Կենտրոնը, ի դեմս խորհրդա-

յին Միության կոմունիստական կուսակցության քաղաքաբյուրոյի, անհրաժեշտ քայլեր չձեռնարկեց կանխելու ազգամիջյան բախումները, որի թողտվության պայմաններում հետզհետե սաստկացան հայ-ադրբեջանական զինված հակամարտությունն ու բախումները, իսկ հայա-շատ բնակավայրերում՝ Ադրբեջանի ղեկավարության դրոյմամբ հայ բնակչության ջարդերն ու տեղաշարժերը:

3. Փետրվարի 22-ին Ասկերան քաղաքի մատուցներում տեղի ունեցած հայ-ադրբեջանական զանգվածային բախումը ցույց տվեց, որ ավարտված կարելի է համարել արցախյան հիմնահարցը քաղաքական կամ իրավական հարթության մեջ լուծելու խնդիրը, և անհրաժեշտ էր անհապաղ սեղմ ժամկետում միջոցներ ձեռնարկել թուրք-ազերիների ասպատակությունները կանխելու ու հակահարված տալու ուղղությամբ:

Փաստորեն 1988 թվականի փետրվարի 22-ի ասկերանյան հայ-ադրբեջանական առաջին զանգվածային բախումը և հայերիս հաղթանակը կարևոր դերակատարություն ունեցավ Արցախի ինքնապաշտպանության գործը շուտափույթ կազմակերպելու հարցում: Ինչպես ցույց տվեցին Ղարաբաղյան շարժման հետագա գործընթացները, հայկական բնակավայրերի ու կոլեկտիվ տնտեսությունների ունեցվածքի պաշտպանության գործում անթերի էին ամեն մի բնակավայրում գաղտնաբար կազմակերպված զինված ջոկատների գործողությունները:

Ասկերանում տեղի ունեցած դեպքերը միաժամանակ ապացուցեցին, որ զինված հակամարտության հաջողությունը կապ չունի հակամարտող կողմերից մեկի թվական գերազանցության հետ: Վճռորոշ եղավ հայերիս բարոյախոզեբանական պատրաստականության բարձր վիճակը և կամային հատկանիշների դրսևորումները: Այս գործոնի շնորհիվ հայությունը կարողացավ ապահովել իր առավելությունները մարտական բոլոր գործողությունների ժամանակ: Մի կարևոր համագամար ևս նպաստեց Ասկերան-Բերդավանի պաշտպանության գործի հմուտ կազմակերպմանը: Ոչ միայն փետրվարյան իրադարձությունների ժամանակ, հետագայում ևս արտահայտված ձևով ընդգծվեց ու երևաց Ասկերանի շրջանի ժողովրդի և նրա ղեկավարության գաղափարական միասնությունն ու շարժումն իր վերջնական ավարտին հասցնելու պատրաստականությունը:

Կեցցե՛ն բոլոր նրանք, ովքեր կարևորագույն ներդրում ու դերակատարություն ունեցան 88-ի համաժողովրդական շարժման ալիքի վրա հայոց պետականությունը վերականգնելու գործում: Հավերժ փառք ու պատիվ բոլոր նրանց, ովքեր արյան գնով ազատագրեցին հողը հայկական և նպաստեցին, որ հայությունն ազատագրված հայրենիքում, իր պատմական հողի վրա ուրվագծի ու կերտի իր երազած ու ապագայի ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի Հանրապետությունը:

**Այլոչա ԳԱՐԻԵԼՅԱՆ
Ասկերանի քաղաքապետ
Շարժման ակտիվիստ**

ՃԱՐԺՈՒՄ - 25

ՊԱՏՆԱԿԱՆ ԱՊԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

1988թ. փետրվարի 13-ին Ղարաբաղյան շարժումն ընդհատակից դուրս բերելուց հետո ուշադիր հետևում էինք ներքին և արտաքին արձագանքներին: Հայաստանի զանգվածային լրատվամիջոցները քար լռություն էին պահպանում: Մինչ այդ հատուկ կոչով դիմել էինք ՀԽՍՀ ղեկավարությանը՝ պահանջելով սատար կանգնել մեր պայքարին, որը նույնպես անպատասխան էր մնացել:

Կոմիտաս Դանիելյանի հետ որոշեցինք պատվիրակություն ուղարկել Երևան: Այդ մասին հայտնեցինք Սլավիկ Միրզոյանին, նա մեծ ոգևորությամբ ընդունեց առաջարկը և ստանձնեց պատվիրակությունը ղեկավարելու պատասխանատու գործը:

Կ. Դանիելյանը գրեց ՀԿԿ Կենտկոմին ուղարկվելիք դիմումի տեքստը: Ս. Միրզոյանի հետ լուծեցինք պատվիրակության կազմակերպման, ֆինանսավորման ու տրանսպորտային ապահովման խնդիրները: Ընդգրկվեցին կուսակցական և տնտեսական ղեկավարները, կրթության, մշակույթի ու շրջանային թերթի աշխատողներ, Հայրենական մեծ պատերազմի կին վետերան և երկու շարքային բանվոր:

Պատվիրակության անդամներին վտանգի չենթարկելու համար Ս. Միրզոյանը փաստաթղթերով Երևան ճանապարհվեց փետրվարի 18-ին: Նույն օրն անմիջապես ձեռնամուխ եղավ Երևանի հայրենասիրական ուժերի հետ հանդիպմանը: Առաջինը հանդիպեց Իգոր Մուրադյանին, այցելեց Վազգեն Մանուկյանի տուն, որտեղ հավաքվում էր Շարժման ակտիվը, կապ ստեղծեց գրողների

միության հետ, և 1988թ. փետրվարի 20-ին ներկայիս Ազատության հրապարկում մեր պատվիրակությանն աջակցելու նպատակով կազմակերպվեց առաջին հանրահավաքը: Պատվիրակության կազմում էր նաև Ասկերա-Մի շրջանային «Կարմիր դրոշ» թերթի ֆոտոլրագրող Վալերի Պետրոսյանը, ում հաջողվել է լուսանկարել Երևանում կայացած հանրահավաքները և, առիթաբար, Շարժման ողջ ընթացքը:

Համաբավածները մեծ խանդավառությամբ դիմավորեցին 70 տարվա տարանջատումից հետո մայր Հայաստանին վերամիավորման նպատակով Արցախից ժամանած՝ ՀԽՍՀ պատմության մեջ առաջին պատվիրակությանը, որը կարողացավ գործունե մասնակցություն ունենալ Արցախը Հայաստանի գիրկը վերադարձնելուն նվիրված համահայկական հանրահավաքին: Ոգեշունչ ելույթներ ունեցան Սիլվա Կապուտիկյանը, Վաչե Սարուխանյանը, Իգոր Մուրադյանը, մեր պատվիրակներից՝ Սլավիկ Միրզոյանը, Լաուրա Մարտիրոսյանը և ուրիշներ: Հանրահավաքի հիմնական կարգախոսն էր՝ «Հայաստանի կոմկուսի Կենտկոմ, վերջ տալ հանցագործ անտարբերությանը» և «Ղարաբաղը մերն է եղել, կա և կմնա»: Պատվիրակությանն ընդունեցին որպես ողջ Արցախի պատվիրակներ, և աջակցություն հայտնեցին արվեստագետները, ապարդիները, գյուղերիցները, էջմիածնիցիները, վանաձորիցիները, արարատիցիները և այլ քաղաքների ներկայացուցիչներ:

Հանրահավաքի մասնակիցները Ս. Կապուտիկյանից, Վ. Սարուխանյանից, Ի. Մու-

րադյանից և ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Արզունյանից պահանջեցին իրենց անունից միջնորդելու պատվիրակությանը Հայաստանի իշխանությունների հետ հանդիպման հարցում: Հանրահավաք անցկացվեց նաև ՀԿԿ Կենտկոմի շենքի դիմաց, որտեղ ելույթ ունեցավ Ավետարանոցից ժողովրդական բժիշկ, պատվիրակ Գեորգի Մնացականյանը:

Հանդիպեցին Կարեն Դեմիրճյանի հետ: Ս. Կապուտիկյանը պահանջեց, որ այդ պատմական հանդիպումը լուսաբանվի Հայաստանի ԶԼՄ-ներով: Անվճռականությունը համակել էր իշխանավորներին, և նրանք այդպես էլ չհամարձակվեցին լուսաբանել:

Հաջորդ օրվա՝ փետրվարի 21-ի հանրահավաքն ավելի բազմամարդ էր: Արդեն մասնակցում էին ոչ միայն ուսանողները, այլև դասախոսներն ու մտավորականությունը: Հանրահավաքի մասնակիցները ցնծությամբ ընդունեցին ԼԴԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի մասին լուրը: Ելույթ ունեցողները պահանջեցին կոմկուսի պատասխան տալ պատվիրակության պահանջին:

Ժամը 20.00-ին Կ. Դեմիրճյանը ստիպված էր նորից ընդունել մեր պատվիրակությանը, սակայն նա կրկին լսողի դերում էր: Տեսնելով հանդիպման մասնակից իշխանավորների սառը պահվածքը՝ Ս. Կապուտիկյանը դառնացած խնդրեց, որ օգնեն Ղարաբաղյան խնդրի լուծման հարցում, այլապես հայ ժողովուրդը երբեք չի ների: Մեծ բանաստեղծի խոսքը, հիշակալի, մարգարեական էր:

Թատերական հրապարակը դարձավ այն պլացդարը, որտեղից հայ ժողովուրդն իրա-

գործեց մեր ազգային-ազատագրական հեղափոխությունը:

Պատմական առաքելություն կատարած մեր պատվիրակությունը, հաղթահարելով բազմաթիվ վտանգներ, Ասկերան հասավ 25 տարի առաջ փետրվարի 22-ի առավոտյան և անմիջապես ձեռնամուխ եղավ ԽՍՀԿ Քաղբյուրոյի՝ փետրվարի 21-ի «Լեռնային Ղարաբաղում իրադարձությունների մասին» որոշման դեմ հանրահավաքի կազմակերպմանը և դահլիճում մեր ու դրսեկ էմիսարներին հակահարված տալուն: 25 տարի առաջ նույն այդ օրը և համարյա նույն այն ժամին, երբ կուսընթացի բյուրոյի 5 անդամները հավանություն էին տալիս մեր հիմնավորված պահանջի մերժման մասին ԽՍՀԿ Կենտկոմի Քաղբյուրոյի որոշմանը, Ու գյուղից կուսընթացի բյուրոյի անդամ Մարտիկ Արզունյանը, ձեռքը հրացանի փողի պես ուղղած Հասանովի սառը ակնոցներից, ոչ ավել, ոչ պակաս ասաց. «Թաղեմ ձեզ, 70 տարի է՝ մեզ ուտում եք, տանջում, վե՛րջ, հերի՛ք է, ձեզանից կշտացել ենք, ուզում ենք մեր ժողովրդի հետ ապրել, ուզում ենք միանալ մեր Մայր Հայաստանին»:

Եվ ոգևորված նման ազնիվ ու հայրենասեր մարդկանց սխրանքով՝ առաջին անգամ դեմ շարվեց ԽՍՀԿ Քաղբյուրոյի որոշումը, և Ասկերանի մատույցներում թաղեցինք մեր քաղաքացիներին ցեղասպանության ենթարկելու թուրքերի մուրազը:

Սլավիկ ԱՌՈՒՆԵԱՆՅԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆՈՒՄ ՀՆՉԵԼ Է ԱՐՃԱՄԻ ԶԱՅՆԸ

1988 թ. փետրվարի 12-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի շրջաններում և Ստեփանակերտում Բաքվի ճնշմամբ տեղի ունեցան կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովներ: Դրանք պետք է ընդունեին Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու պահանջը դատապարտող որոշում: Ի հեճուկս Ադրբեջանի՝ այդ ժողովներում ոչ թե դատապարտվեց, այլ պաշտպանվեց մարզի հայ բնակչության՝ մայր հայրենիքին միանալու պահանջը: Հաջորդ օրը՝ փետրվարի 13-ին, մարզկենտրոնում անցկացվեց քաղաքի աշխատավորների և ուսանողների առաջին հանրահավաքը, և Շարժումը դարձավ համաժողովրդական: Փետրվարի 15-ին շրջաններում և Ստեփանակերտում հրավիրվեցին ժողովրդական պատգամավորների խորհուրդների նստաշրջաններ, որոնք կայացրին ԼԴԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին որոշում:

Փետրվարի 16-ից սկսած՝ ժողովուրդը գիշեր-ցերեկ չէր հեռանում Ստեփանակերտի կենտրոնական հրապարակից՝ պահանջելով անցկացնել ժողովրդական պատգամավորների ԼԴԻ մարզխորհրդի արտահերթ նստաշրջան և ընդունել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանի կազմ մտցնելու վերաբերյալ որոշում:

Մարզը փոթորկվում էր, իսկ Հայաստանում սպասողական լռություն էր: Փետրվարի 20-ին Երևանի Թատերական հրապարակում նախատեսված էր անցկացնել հանրահավաք, որին պիտի մասնակցեին պատվիրակներ՝ հանրապետության շրջաններից: Հանրահավաքին մասնակցելու համար Հայաստանի մայրաքաղաք մեկնեց նաև պատվիրակություն՝ Ասկերանի շրջանից:

- Շարժման պատմության մեջ մի կարևոր հանգամանք բաց ենք թողնում,- նկատում է Ասկերանի շրջանում Շարժման ղեկավար Սլավիկ Առուշանյանը:- Դա Ասկերանի շրջանի պատվիրակության մասնակցությունն է Թատերական հրապարակում անցկացված հանրահավաքին: Ի՞նչն է դրդել դիմել այդ քայլին: Մեր նախաձեռնող խումբը տարակուսած էր, որ Հայաստանը ոչ մի կերպ չարձագանքեց փետրվարի 13-ի իրադարձությանը: Հաջորդ՝ փետրվարի 15-ի հանրահավաքը նույնպես լռության մատնվեց: Արձագանք չեղավ նաև նախաձեռնող խմբի անունից Հայաստանի իշխանություններին հղված հեռագրին, որում խնդրվում էր պաշտպան ու նեցուկ կանգնել պայքարի ելած արցախցիներին: Կոմիտաս Դանիելյանն ու ես քննելով այս պահվածքը՝ որոշում ենք պատվիրակություն ուղարկել Երևան: Կոմիտասը նամակ է գրում, ու միասին քննարկում ենք: Նամակը պատվիրակության միջոցով ուղարկում ենք

Հայաստան՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդին ու կոմկուսի Կենտկոմին: Մեր պատվիրակության մասնակցությունը կարևոր նշանակություն է ունեցել Հայաստանում Շարժման մասսայականացման գործում: Սլավիկ Միրզոյանն ու Լաուրա Մարտիրոսյանը ելույթ են ունեցել Թատերական հրապարակում ու ներկայացրել մեր պահանջները, ինչը խիստ տպավորիչ ազդեցություն է ունեցել: Ս. Միրզոյանը, հավաքվածներին ծանոթացնելով նամակի բովանդակությանը, առաջին անգամ հայտարարել էր, որ բոլոր կամուրջներն այրված են, ու հետդարձի ճանապարհ չկա: Մեր պատվիրակությանն ընդունել է Կարեն Դեմիրճյանը: Նա պատվիրակության պահանջները, կարելի է ասել, պաշտոնական մեղմ ներկայացրել է Հայաստանի կառավարությանը: Իսկ մենք պահանջում էինք տեղ կանգնել Արցախի ժողովրդին:

Խմբի կազմում էին կուսընթացի հրահանգիչ Գագիկ Ասրյանը, Զանադուր տեղանասպիկի հիվանդանոցի գլխավոր բժիշկ Գեորգի Մնացականյանը, կոմունալ ձեռնարկությունների կոմբինատի տնօրեն Գարիկ Գրիգորյանը, քաղպաշտպանության շրջանային շտաբի պետ Վյաչեսլավ Գասպարյանը, ուսուցչուհի Լաուրա Մարտիրոսյանը և Աշոտ Հովսեփյանը (հնամապատ), Վալերի Պետրոսյանը (Նորագյուղ), Հայրենական մեծ պատերազմի վետերան Ասյա Լեյբան, գրադարանավարուհի Լուսին Թովմասյանը, բուժքույր Նորա Ասրյանը և Շիրին Ասլանյանը (Ասկերան), «Անասնարդ» միավորման աշխատակից Ռուդիկ Ոսկանյանը: Պատվիրակության ղեկավարն էր «Կարմիր դրոշ» շրջանային թերթի գյուղաբաժնի վարիչ Սլավիկ Միրզոյանը:

Վերհիշում է Լաուրա Մարտիրոսյանը: Նա այժմ Ստեփանակերտի հ. 2 դպրոցի տնօրենն է: - Փետրվարի 19-ն էր: Պատմության դաս էի վարում 10-րդ դասարանում: Դպրոցի տնօրեն Ջավեն Բեգլարյանը դուռը կամացուկ բացում է և ասում, որ պարսպանույթը թողնեն և պատրաստվեն՝ մեկնելու Երևան: Ժամանակ չկար հարցնելու՝ ինչի՞ համար, ինչո՞ւ ես: Գնացի տուն: Կեսուրս անկողնային հիվանդ էր, երեխաներս՝ փոքր. ավագ որդին 4 տարեկան էր, կրտսերի 3-ն էլ չէր լրացել: Ամուսինս՝ Գագիկ Ասրյանը, եկավ տուն: «Շտապիր, - ասաց, - գնում ենք Հայաստան»: Մեր սեփական մեքենայով իջանք Ասկերան: Այստեղ իմացանք, որ հաջորդ օրը Երևանի Թատերական հրապարակում պետք է տեղի ունենա հանրահավաք: Առաջին հանրահավաքը՝ նվիրված Արցախյան շարժմանը: Ղարաբաղի պատվիրակներս այնտեղ պետք է ազատ ապրելու մեր ծայրը հնչեցնեինք, մայր Հայաստանին վերամիավորվելու մեր պահանջը ներկայացնեինք: Միջօրեից հե-

տո 12 հոգիս հուսավառ զաղափարներով ճանապարհվեցինք: Նույն օրը Երևանում էինք:

Փետրվարի 20-ին Թատերական հրապարակում անեղ զցելու տեղ չկար: Բոլորին նույն զգացմունքներն էին պատել, բոլորին նույն ոգին էր միավորում: Խանդավառվեցի, երբ տեսա հրապարակը լցվում-ծովանում է Հայաստանի տարբեր շրջաններից եկած պատվիրակություններով: Նրանք դրոշներով էին, մեր իղծերն ու կամեն արտահայտող ցուցապատառներով: Հեռտարների խոսքը հստակ էր, ազդու և ոգևորող: Մեկ բռնցք էինք դարձել, մեկ ոգի: Մի պահ, սակայն, սառնություն իջավ բազմության վրա: Հայտարարվեց, թե Ադրբեջանի ռադիոն հաղորդել է, որ Ղարաբաղի հարցը կլուծվի միայն արյունով: «Կլորուն» բառը սառը ջուր մտնեց հանրահավաքի մասնակիցների գլխին, մի պահ ընկրկեցինք: Բայց դա մի պահ էր, մի ակնթարթ: Պարզապես չէինք սպասում, որ Ադրբեջանը 20-րդ դարի վերջին նման բարբարոսական հայտարարություն կան: Հիշում են՝ առաջին շարքերում կանգնածների աչքերն արցունքով սրբվեցին: Նրանց մեջ էր և մեծ երգչուհի Օֆելյա Հանբարձույանը: Մարդիկ արագ սթափվեցին, և հանրահավաքը նույն ոգով շարունակվեց: Մեր պատվիրակության մասնակցությունն այդ միջոցառմանն իրոք անհրաժեշտ էր: Մեր ներկայությունն էր, որ բարձրացրել էր ժողովրդի ոգին ու կարևորություն հաղորդել հանրահավաքին:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի ներկայացուցիչները Շարժմանը վերաբերվում էին զգուշավորությամբ: Իսկ ժողովուրդը պահանջում էր, որ նրանք առաջնորդեին այն: Մեր պատվիրակությունը որոշեց հանդիպել ՀԽՍՀ կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանի հետ: Կարեն Սերոբիչն ասաց, որ ինքը ծագումով կարսեցի է և ամեն անգամ, երբ սահմանի այս կողմից նայում է պատմական հայրենիքին, ծանր ապրումներ է ունենում: Գուցե նա մեզմիջ շատ ավելի հայրենասեր էր, բայց խորհրդային երկրի ներքաղաքական պայմաններից ելնելով՝ հարցին մոտեցավ չափավորությամբ:

Հանրահավաքը մեզ լիցքավորել էր: Բավական էր միայն, որ հազարավոր մարդիկ միասին հավաքվել էին, հավաքվել էին հավաստելու, որ իրենք Արցախի իրենց հայրենակիցների կողքին են: Ինչ հետո պիտի տեղի ունենար, երևի թե սկիզբ առավ հենց Թատերական հրապարակից՝ Հայաստանը նկատի ունեմ:

Փետրվարի 21-ին ուղևորվեցինք Երևանից՝ մեկ «ՌԱՅ» միկրոավտոբուսով, մեկ «Ժողովրդի» ավտոմեքենայով: Իջևան քաղաքում կանգ առանք՝ «Քարավան» իջևանատանը մի կտոր հաց ուտելու: Աշխատողները տարակուսանքով

մեզ էին նայում ու ինչ-որ բան փսփսում: Ըստ երևույթին մեր հանդգնությունն էր նրանց զարմանքի պատճառը: Չէ՞ որ արդեն ուշ ժամ էր, իսկ մենք Իջևանից պետք է մտնեինք Թուրք և Ադրբեջանի տարածքով շարունակեինք ճանապարհը: Արդեն վտանգը զգուս էինք, իրական վտանգը: Ակամայից մենք էլ զգաստացանք: Գիշերը վրա էր հասնում, իսկ մենք պետք է անցնեինք Կիրովաբադով, որտեղի թուրքերը խիստ մոլի են: Այս քաղաքով ապահով անցանք: Երբ հասանք Միր Բաշրի մոտ և պիտի մտնեինք Մարտակերտ, պետավտոտեսչության աշխատակիցները հայտնեցին, որ ճանապարհը վտանգավոր է, և մենք, հնարավոր է, ապահով տեղ չհասնենք:

Մարտակերտում ցնցող պատկեր էր: Գիշեր էր, ժամը 2-ը: Գիչ, աղաղակ, լացուկոծ, վիրավոր մարդիկ... Հայերի՛ ճանապարհին քարկոծված մեքենաներն էին մտնում Մարտակերտ: Արդեն սկսվել էր Շարժման, կարելի է ասել, քարունահակի փուլը:

Որոշեցինք շատ վաղ մեկնել Մարտակերտից: Եվ բարեբախտություն էր, որ այդպես որոշեցինք: Եթե կես կամ մի ժամ ուշ դուրս գայինք, կդառնայինք Ադրբեջանի վրա հարձակված թուրք խաժամուժի թիրախ, և ով գիտե, թե ինչ ավարտ կունենար մեր ուղևորությունը: Փետրվարի 22-ի լուսածագին մեկնեցինք Մարտակերտից և ժամը 8-ի մոտերքն արդեն Ասկերանում էինք: Օրը էլ հիշում են՝ երկուշաբթի էր: Բարձրացա հսնապատ: Հեռախոսով մեր տնօրենին տեղեկացրի, որ գյուղում են ու պատրաստվում են աշխատանքի գնալ: Ասաց, որ դպրոց չգնամ, քանի որ ուսուցիչները բարձր դասարանների աշակերտների հետ իջնում են շրջկենտրոն: Շամացած մի ժամ՝ աղմուկ, աղաղակ... Մեր տունը գյուղի բարձրադիր մասում էր: Տեսանք՝ ճանապարհը սկիզբ է տալիս. Ադրբեջան-Ստեփանակերտ մայրուղին լցված էր թուրք խառնամբխով, զալիս էին հազարներով: Խնամապանդաները չկորցրին իրենց, Ասկերանում ժողովուրդը չկորցրեց իրեն, և ըստ արժանվույն պատասխան տրվեց խաժամուժին:

1991-ին մեզ ազատ ու անկախ պետություն հռչակեցինք, որը ցայսօր չի ճանաչվում միջազգային հանրության կողմից: Ինչքան էլ սև ամպեր կուտակվեն, անցնեն տարիներ ու էլի չճանաչված մնանք, չպետք է վիստակնք: Ամուր կանգնեց մեր դիրքերում, լինեց միաբան ու միասին, ինչպես 88-ին էր, և հաղթանակը մերը կլինի:

Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՆՉՈՒ Է ԼՈՒԻԹՅԱՆ ՄԱՏԵԿՈՒՄ ԿԱՍ ԱՂԱՎԱԴՐՈՒՄ ԾՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

1988թ. փետրվարի 13-ին Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում շեփոր չհնչեց: Չեղարկվեց շեփորի ձայնը դառնալու համարահավաքների ազդեցության: 25 տարի առաջ կազմակերպված հանրահավաքը բեմագիր չուներ, չէր նախապատրաստվել, ինչպես այս անգամ էր: Դրա ժամանակը չկար, իսկ ուշացնելը հավասարազոր կլիներ, Ասկերանի շրջանում Շարժման ղեկավար Սլավիկ Առուշանյանի խոսքերով, մինչև այդ արածը ջուրը թափելու: Փետրվարի 13-ին Ստեփանակերտում ցույց և հանրահավաք անցկացնելու գաղափարը հենց նրանն էր: Փետրվարի 12-ի ուշ երեկոյան է մնամ որոշում կայացրել, իսկ մարդկանց հրապարակ հանելու գործը խնդրել է գլուխ բերել Ստեփանակերտից Արկարի Կարապետյանին: Իսկ ինչո՞ւ այդքան հապճեպ:

Հայաստանին վերամիավորվելու վերաբերյալ աշխատավորական կոլեկտիվներում կազմակերպված ստորագրահավաքներ, Կրեմլ ուղարկված խնդրագրեր, արցախցի պատվիրակների այցեր Մոսկվա՝ այս ամենն սկսեց լրջորեն մտախոգել Բաքվին: Եվ նա վճռեց առաջն առնել, ժամանակին սանձել արցախցիներին, ժողովրդական ընդվզումը ներկայացնել իբրև մի խուճբ ծայրահեղականների ու ազգայնականների գործ ու, չեզոքացնելով վերջիններին, հանգցնել բռնկած կայծը, հանգցնել, որպեսզի հետո բոց չդառնա:


Բաքվի բեմագրով փետրվարի 12-ին Ստեփանակերտում և շրջաններում տարբեր ժամերի պետք է անցկացվեին կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովներ և ընդունվեին Շարժումը դատապարտող որոշումներ, ներկայացվեք, իբր թե մի խուճբ անձինք են ժողովորդին հրահրում, միացման հովերով մոլորեցնում: Այս լուրը, որը խիստ զաղտնի էր, Ասկերանի շրջանում Շարժման նախաձեռնող խմբին հայտնում է կուսակցության Ասկերանի շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը: Բաքվից ժամանած բարձրաստիճան աշխատակիցներին առաջին քարտուղար Բորիս Կարկովի, մարզխորհրդի գործկոմի նախագահ Վլադիմիր Օսիպովի՝ ժողովներում ներկայությունն իսկ ճնշող էր լինելու: Ո՞վ գիտե, թե ինչ ավարտ կունենային դրանք, եթե Շարժման ակտիվիստները նախօրոք տեղյակ չլինեին ու հոգեբանորեն նախապատրաստված հակահարվածի, ճնշումներին դիմադրելու, իսկ դրսում հավաքված բազմությունը չքաջալերեր նրանց:

Ըստ ժամանակացույցի՝ առաջին ժողովը ժամը 11-ին գումարվում է Ստեփանակերտում: Ասկերանի շրջանի ակտիվիստները գալիս են այստեղ և իրենց համախոհներին հորդորում չվախենալ սպառնալիքներից ու տեղի չտալ: Այդպես էլ լինում է: Բաքվի պլանները տապալվում են նաև շրջաններում: Կենտրոնում մոր ծրագիր են որոշում՝ որոշելով տեղիս կոմունիստների ձեռքով խեղդել Շարժումը: Հաջորդ օրը՝ փետրվարի 13-ին, պետք է հրավիրվեր կուսմարզկոմի բյուրոյի ընդլայնված նիստ՝ Ստեփանակերտի քաղաքային և շրջանային կոմիտեների բյուրոների անդամների մասնակցությամբ: Այս մասին Ս. Առուշանյանին և ակտիվիստներին դարձյալ Վ. Գրիգորյանն է տեղյակ պահում: Իրենք՝ ակտիվիստները, բյուրոների անդամների վրա չէին կարող ազդել, իսկ վերջիններս հազիվ թե ընդդիմանային: Իսկ դա կնշանակեր, որ Բաքուն կհասնի իր նպատակին՝ ընդունել տալով Հայաստանին վերամիավորվելու արցախցիների սահմանադրական պահանջը դատապարտող որոշում: Ս. Առուշանյանը բյուրոների անդամների վրա ներգործելու, Բաքվի պլանը ձախողելու ելքը համարում է ժողովորդին ուղղի հանելը և Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում հանրահավաք անցկացնելը, ինչը և Շարժման ակտիվիստների ու աջակիցների շնորհիվ հաջողվում է:

Հավաքվել էր ժողովուրդը, իսկ կազմակերպիչները մի պահ չէին էլ ինձնու ինչ անել: Ովքե՞ր են ելույթ ունենալու կամ ելույթներ պիտի լինե՞ն արդյոք՝ չէին մտածել: Ամեն

ինչ ստացվել է ինքնաբերաբար: Ճնշող սպառնալիքներով մանկավարժականի դասախոս Գրիգորի Աֆանասյանն էլ ցրել իր կրակոտ ելույթով: Ուրիշներն էլ են խոսել: Չեղարկվեց շեփորի ձայնը դառնալու համարահավաքներում ելույթ ունեցողները մեկը մյուսին հերթ չէին տալու: Այդ օրը հնչեցին ճշմարտություններ, որոնք ասելը մեծագույն համարձակություն էր: Միշտ և այսօր էլ կան չբարձրաձայնվող ճշմարտություններ: Չկան կամ պակասում են խիզախները: Եթե մույնիսկ գտնվեն, ապա վտանգի չափը մույնը չէր կարող լինել 25 տարի առաջ ու այսօր, քանի որ տարբեր են ժամանակները և իրողությունները: 1988-ին մեծ ռիսկ էր անգամ հրապարակ դուրս գալը:

Փետրվարի 13-ին ժողովուրդն արձնացավ միրից, առաջին անգամ բարձրաձայն ու



հրապարակավ արտահայտեց իր կամքը, չընկրկեց տեղական ու հանրապետական իշխանավորների առաջ: Այդ նրանք սարսափեցին ժողովրդական ցասումից ու մի քանի օր անց Աղղամից Ասկերանի վրա հարձակմանը, Սումգայիթում հայերի ջարդերով փորձեցին ահաբեկել ու կասեցնել մեր առաջընթացը: Իսկ մենք, դիմակայելով բռնություններին, անշեղորեն քայլեցինք դեպի վեր, պետություն ստեղծեցինք, անցանք պատերազմի արհավիրքներով, զրկանքների միջով, տալով մարդկային անդառնալի կորուստներ: Այսօր արյունով զծոված մեր սահմանը մեր բանակի զինվորն է պաշտպանում՝ ազատության սերունդը, որի համար իր հայրերի ու պապերի նվաճած անկախությունն անենամեծ արժեքն է:

Այս պատմական էքսկուրսը չէի անի, եթե 25 տարի անց նույն օրը՝ փետրվարի 13-ին, երկրորդ անգամ կազմակերպված, արդեն խորհրդանշական հանրահավաքը չլիներ: Այս հանրահավաքին մասնակցում էին հիմնականում ուսանողներ, դպրոցականներ: Ինչո՞ւ, չէ՞ որ 1988-ին հրապարակում նաև աշխատանքային կոլեկտիվներ էին: Մշակույթի և երիտասարդության նախարարությունն էլ կազմակերպել՝ դրա համար (կարելի և այդպես բացատրել), և այդ հավաքով ցանկացել են հավաստել, որ երիտասարդությունը հավատարիմ է 88-ի ոգուն ու պատրաստակամ՝ պաշտպանելու անկախության նվաճումները: Հարցն է՝ կան չէր լինի, եթե... Տարիներ շարունակ փորձ է արվում փետրվարի 13-ի հանրահավաքը ներկայացնել իբրև ուսանողական և իբրև մանկավարժական ինստիտուտի նախաձեռնություն: Ցավն այն է, որ այդ փորձը կարծես հաջողվում է: Եթե չհաջողվեր, այս փետրվարի 13-ին ինստիտուտի, այսօր արդեն համալսարանի պատին հուշաքար չէր տեղադրվի հետևյալ գրությամբ. «1988թ. փետրվարի 13-

ին Արցախի պետական համալսարանի այս շենքից սկիզբ առավ Ղարաբաղյան շարժման առաջին հրապարակային երթը»: Հարցրեք ստեփանակերտցիներին, ականատեսներին: Կասեն, որ Կիրովի, այժմ՝ Ազատամարտիկների փողոցով առաջինը դեպի հրապարակ էին շարժվում գյուղատնտեսական տեխնիկումի սովորողները (գյուղատեխնիկումն այն ժամանակ ընդգրկում էր Ասկերանի շրջանի Բալուջայի համայնքը): Հիշում են՝ Շարժման 20-ամյակի առթիվ պետհամալսարանի դահլիճում միջոցառում էր կազմակերպվել: Դարձյալ մույնն ասացին՝ մանկավարժական ինստիտուտն է առջևից քայլել: Գյուղատնտեսական բուրձի տնօրենը դուրս գալը, ինչ նպատակ ունի ինստիտուտի՝ առաջնության՝ չասե՞ն դափնին, սեփականելը: Երթին քիչ ուշ միացան արվածի փայլը խամրեցնում է: Կամ ցույցերին ու հանրահավաքներին ընդհանրապես չմասնակցածների վատասկին ա՞լլ հայացքով պիտի նայել:

Միջուցե ես ինչ-որ բան այնպես չեմ ընկալում: Որքան էլ ջանում, չեմ կարողանում ըմբռնել, թե ինչ առավելություն է հրապարակային երթին առաջինը դուրս գալը, ինչ նպատակ ունի ինստիտուտի՝ առաջնության՝ չասե՞ն դափնին, սեփականելը: Երթին քիչ ուշ միացան արվածի փայլը խամրեցնում է: Կամ ցույցերին ու հանրահավաքներին ընդհանրապես չմասնակցածների վատասկին ա՞լլ հայացքով պիտի նայել:

Այժմ այն մասին, թե իբր ցույցը ուսանողական է եղել և մի քանի հարյուր մարդ էին հրապարակում: Հարյուրավոր, թե՞ հազարավոր մարդիկ՝ հարցրեք մասնակիցներին, աչքի անցկացրեք նորագյուղցի Վաչիկի Պետրոսյանի՝ ցույցը պատկերող լուսանկարները: Հրապարակը լիքն էր բազմությամբ, իսկ եթե մույնիսկ ողջ մանկավարժական ինստիտուտն այնտեղ լիներ, հրապարակը չէր լցվի:

Մի պահ ենթադրե՞ք, թե ուսանողական էր: Հետաքրքիր է, ինստիտուտում ինչպե՞ս և ումի՞ց են տեղեկացել, որ ժամը 11-ին պետք է լինեն հրապարակում: Ինքնուրույն են որոշել: Գուցե նրանք կազմակերպել և ոտքի են հանել նաև սովխոգտեխնիկումի սովորողներին՝ Նրանք և ոչ թե Ս. Առուշանյանի հանձնարարությամբ՝ այդ կրթական հաստատության փոխտնօրեն Հենրիխ Ջաբարյանը: Եթե հանրահավաքն ուսանողական էր, ուրեմն պիտի շրջանցվի փաստը, որ հրապարակում էին Ստեփանակերտի աշխատանքային կոլեկտիվների անդամներ, ասկերանցիներ: Անտեսել այդ փաստը, կնշանակի անտեսել մարդկանց արածը:

Իսկ ինչպե՞ս են ինստիտուտի ուսանողներն ու դասախոսները դուրս եկել հրապարակ: Ս. Առուշանյանը փետրվարի 12-ի երեկոյան Ասկերանի շրջանային թերթի խմբագրությունում էր: Երբ մենակ, առանց որևիցե մեկի հետ խորհրդակցելու հանրահավաք անցկացնելու հանդուգն վճիռ է կայացնում, թերթի խմբագիր Կոմիտաս Դանիելյանին, որը նախաձեռնող խմբի անդամ էր, խնդրում է իր մտադրության մասին հայտնել կնոջը՝ ինստիտուտի դասախոս Լենա Գրիգորյանին, որպեսզի վերջինս էլ հաղորդի գործընկերներին և ուսանողներին: Պարզ է, ուսանողներին հրապարակ են դուրս բերել արդեն ինստիտուտի ակտիվիստները: Եթե ինստիտուտն առաջինը չի երթի դուրս եկել, եթե հանրահավաքը զուտ ուսանողական չի եղել, ամենևին չի նսեմանում թե՛ գաղափարական, թե՛ ռազմի ճակատում բուհի դասախոսների ու սովորողների կատարածը, երկրի անկախության պաշտպանության գործում նրանց ավանդը: Վրդովվում ենք, որ ազերին կեղծում է մեր պատմությունը: Այդ դեպքում ինչո՞ւ ենք կեղծում ինքներս՝ աղավաղելով մեր նորագույն պատմության փաստերն ու իրադարձությունները: Աղավաղում ենք կամ լռության մատնում:

Քսանիինգ տարի անց, ի դեպ, առաջին անգամ «փետրվարի 13» ենք հիշել ու նշել որ-

պես տոն: Գովելի է: Սակայն երիտասարդներն այդպես էլ չիմացան իսկությունը, չիմացան, թե ովքեր էին 1988-ի փետրվարի 13-ի հերոսները, գլխավոր գործող անձինք: Ամեն ինչ պատվում էր մանկավարժական ինստիտուտի շուրջ: Փետրվարի 13-ը առճակատում էր, բաց ճակատամարտի հեղինակը, ուղղորդող տրիբունայում չէր, Շարժման առաջամարտիկների շարքում, հանրապետության նախագահի, խորհրդարանի խոսնակի ու վարչապետի կողքին: Նրան չէին հրավիրել, երիտասարդը նրան չտեսավ, անունն անգամ չլսեց:

Արցախցին երբեք չի համակերպվել մայր հայրենիքից անջատ ապրելու իրողության հետ: Երբ փոքր-ինչ բաց խոսելու մթնոլորտ է ստեղծվել, չի լռել, գործել է: «Սորուշյույան ձնհալի» տարիներին, 1965-ին արցախցի 13 հայրենասերներ նամակ գրեցին ԽՍՀՄ Կենտկոմ՝ խնդրելով ուղղել 1921 թվականին Ղարաբաղի հանդեպ կատարված պատմական անարդարությունը, հիմնավորելով Արցախցանի կազմում մարզը թողնելու անհեռանկարայնությունը: Հենց տեղիս կոմունիստների ձեռքով նրանց նկատմամբ հաշվեհարդար տեսան: Հավածանքները մի մասին ստիպեցին հեռանալ ծննդավայրից: Ավա՞ղ, այսօր 13-ից մեկն է ողջ՝ Մաքսիմ Հովհաննիսյանը, որն այդպես էլ չի լքել Ղարաբաղը: Շարժման առաջամարտիկներն արժանիորեն մեծարվում են, իսկ նրան՝ վերջին մոհիկանին, չեն հիշում, Շարժմանը նվիրված հանդիսություններին, միջոցառումներում նրան չենք տեսնում: 13-ի նամակը եթե հիշվում էլ է, ապա որպես վերացական ինչ-որ մի բան: Եթե Ս. Հովհաննիսյանը 13-ի մեջ չլիներ էլ, ապա Շարժման տարիներին, սաֆոնով չլինայի մայր ժամանակներում «խորհրդային Ղարաբաղ» թերթը խմբագրելը, դաժան գրաքննության պայմաններում ազատության հուրը բորբոք պահելն արդեն սխալանք էր՝ արժանի հիշելու: Միտանքը գեներով չեն գործում: Նա էլ է իր կյանքը վտանգել, վտանգել է գրչով՝ ենթարկվելով հետապնդումների, հարկադրված լինելով թերթը երբեմն ղեկավարել ընդհատակից: Ինչո՞ւ աջաթող անել, որ նաև այդ 13 քաջորդիներն են նախապատրաստել 1988-ը: Երիտասարդներին պատգամում են չմոռանալ ոչ վաղ անցյալն ու դառնալ արժանի Շարժման ջահակիրներին՝ շարունակելով նրանց գործը: Իսկ նրան, ով չի հիշում և չի մեծարում իր նախորդներին, անկախ վաստակից ու այսօրվա փառաբանումից, տասնամյակներ անց մույնպես չեն հիշի, երբ արդեն ժամանակի պարտադրմամբ իր վերաբերմամբ օգտագործվի «նախորդ» բառ-տարբերակումը:

Հանրահավաքն ավարտվել է շուրջապարով: Պարի շուրջ միասնություն դժվար չէ ստեղծել: Ոգու, կամքի միասնությունն է դժվար ստեղծվում ու ամրանում: Այդ միասնության շաղախը ճշմարտությունն է, արդարությունը և սերը միմյանց հանդեպ: Եթե շաղախը թույլ եղավ, միասնությունը ճաք կտա: 88-ի միասնությունը վերագտնելու համար պիտի զանց չառնենք ճշմարտությունը, արդարությունը և ապավինենք սիրուն: Լույսի ճամպարից այս երեքի միջով է ձգվում: Լույս, որին ընդառաջ գնացինք փետրվարի 13-ին: Լույսին, ուրեմն Տիրոջ ընդառաջ գնացինք:

7.9. - Հոգվածի ռադիոտարբերակը փետրվարի 15-ին հնչել է Արցախի հանրային ռադիոյով: Վերածննդի օրը՝ փետրվարի 20-ին, կառավարության նիստերի դահլիճում կազմակերպված տոնական հավաքին հրավիրված էին նաև Ս. Հովհաննիսյանն ու Ս. Առուշանյանը: Հակված չեն պնդելու, թե միմյանք երբևէ հնչեցված հաղորդման շնորհիվ: Սակայն շատ կուզենայի վստահորեն պնդել, որ կան ճշմարիտ խոսքին ունկնդիր անձինք, ովքեր քաջություն կունենան ուղղելու սխալը՝ համալսարանի պատից հանել տալով «հուշաքարը»:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍ

ՆՊԱՍՏԵՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԳԱԿԻ ԲԱՐՁՐԱՃՄԱՆԸ

«Մի հարցրու, թե երկիրդ ինչ կարող է անել քեզ համար, այլ, հարցրու, թե դու ինչ կարող ես անել երկիրդ համար»:

Ի պատասխան վերը նշված հարցի՝ Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանի աշակերտները կասեն՝ «Մենք մեծ բաներ անել չենք կարող, փոխարենը կարող ենք փոքր բաներ անել՝ մեծ սրտով»: Այն է՝ մենք սիրում ենք մեր հայրենիքը և նրա բարգավաճման գործում մեր մասնակցությունը: Լավ սովորել, լինել հայրենիքի արժանավույն զավակ, պահել, պաշտպանել և այն փոխանցել զալիք սերունդներին, ինչպես արել են մեր քաջ նախնիները՝ Հայկ նահապետն ու քաջ Վարդանը, Մեսրոպ Մաշտոցն ու Սատուցի Դավիթը, քանզի՝

Հայոց երկիրն են Պաշտպանել սիրով, Վարդանը՝ սրով, Մեսրոպը՝ գրով:

Հայրենիքի հանդեպ ուժգին սերն էր, որ այդ օրը 4-րդ դասարանի աշակերտները (ուսուցչուհի՝ Ս. Թամազյան) ցանկացան «ես և շրջակա աշխարհը» առարկայի «Հայաստանը իմ հայրենիքն է» թեմայի ուսումնասիրումն անցկացնել դպրոցի պատմության կաբինետում՝ համագործակցելով ավագ ընկերների և ուսուցչուհի Կարինե Հովհաննիսյանի հետ: Դասն իր տեսակով յուրօրինակ էր, որովհետև համագործակցային աշխատանքի միջոցով սովորողները կարողացան երկու դասարանների դասանյութերի միջոցով ներկայացնել հայ ժողովրդի՝ որպես հավերժի ճանփորդ լինելու խորհուրդը:

«Ճանապարհորդությունն» սկսվեց պատկերասրահում շրջագայությամբ. ներկայացվեց հայ ժողովուրդը որպես հավերժի ճանփորդ, Արարատ լեռը՝ մարդկության փրկության խորհրդանիշ, հայության նվիրական օրրան:

Նշվեց, որ այստեղ են կառուցվել մեր

հին մայրաքաղաքները՝ Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Վաղարշապատը, Դվինը, Բագարանը, Երևանը: Եվ որ այստեղ է Հայկ նահապետն իր աղեղով և երեքթևյան նետով գետին տապալել գոռոզ Բելին՝ կոչելով մեզ հայ, իսկ մեր երկիրը՝ Հայաստան:

Հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները՝ դասը վերածվեց ինքնատիպ և հետաքրքիր միջոցառման: Աշակերտներն ապրեցին հայրենիքի պատմամշակութային արժեքների հետ ծանոթանալու և դրանք վերապրելու հաճելի պահեր:

Հասնիկը, Նոնան, Լուսինեն ներկայացրին Մեծ Հայքի Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց թագավորությունները՝ քարտեզի վրա նշելով նաև մայրաքաղաքները: Իսկ կրտսեր դպրոցականները՝ Քնարիկը, Գայանեն, քարտեզի վրա ցույց տվեցին մեր հարևան պետությունները՝ Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան և Իրանը:

ՀՀ և ԼՂՀ վարչական քարտեզի վրա նրանք գտան իրենց մարզը և նրա հարևան մարզերը՝ մարզկենտրոններով: Խոսեցին տեղական ինքնակառավարման մարմինների՝ քաղաքապետի և համայնքի ղեկավարի աշխատանքների մասին: Սովորողներից յուրաքանչյուրն իր սիրած գույնով նկարեց իր ծննդավայրը, և կազմեցին նրա քարտեզը: Նրանք մեկը մյուսին լրացնելով՝ ներկայացրին մեր պետության խորհրդանիշները՝ դրոշմը, օրհներգը և զինանշանը: Հպարտությամբ պատմեցին հայ ժողովրդի անցյալի ու ներկայի նշանավոր որոշ իրադարձությունների, գործիչների, մշակութային արժեքների մասին: Հասկացան «հայրենիք», «ազգ», «հայրենասիրություն» հասկացությունների խոր իմաստը: Թերևս ամենահետաքրքիրն այն էր, որ երեխաները գիտակցում են, որ իրենք Արցախ աշ-

խարհի հող ու ջրով զորացած զավակներ են և այս երկրի լիիրավ տերն են ու երբեք չեն թողնի, որ թշնամին սուր բարձրացնի իրենց երկրի վրա: «Այսօր մենք ունենք մի փոքր, բայց անկախ ու ազատ պետություն, որը կոչվում է Հայաստան», - ասում է Գռը:

Դասապրոցեսում ապահովվեց ուսուցչի և սովորողների, ուսուցիչ-ուսուցիչ, սովորող-սովորող-ուսուցիչ համատեղ ու ստեղծագործական սերտ կապը, խմբային-անհատական փոխներգործությունը, ինչի արդյունքում սովորողները ձեռք բերեցին գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Դասը կառուցվել էր ստեղծագործական մոտեցմամբ և բովանդակային փոխկապվածությամբ, երկու դասանյութերի միջև տրամաբանական կապերի ստեղծումով: Դասն ունեցավ մի քանի առավելություններ՝ կոլեկտիվ, խմբային և անհատական աշխատանքները համակցելու բարենպաստ հնարավորություններ: Ուսուցչը կարողացավ համակարգված և հետևողականորեն բացատրել նյութը, դեկավարել սովորողների ճանաչողական կարողությունների զարգացումը: Կարևորվեց աշակերտների հիշողության ամրապնդումն ու զարգացումը, հայրենասիրական դաստիարակությունը, առանց որի անհնար է պատմության դասավանդումը:

Դասն աշակերտակենտրոն էր և նպաստեց սովորողների ճանաչողական հնարավորությունների մակարդակի բարձրացմանը խնդրահարույց հարցերի, ինքնագնահատման, փոխգնահատման ջերմ մթնոլորտում:

Սիրվարդ ԹԱՄԱԶՅԱՆ Քաշաթաղի շրջանի կրթության բաժնի տարրական դասարանների գծով տեսուչ

ՄԵԾԱՆՈՒՄ ԵՆ ՈՐՊԵՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՉԻՆՎՈՐՆԵՐ

Քաշաթաղի շրջանի Հոջանց գյուղի Ավարդ Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցում մի ամբողջ շաբաթ նվիրված էր Մայրենիի և Հայրենյաց պաշտպանի օրվան:

Դպրոցը տոնական տրամադրության մեջ էր: Բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներ էին կազմակերպվել՝ արհեստանոցի և հայրենյաց դասեր, շարադրություններ՝ տնօրեն Թ. Մելքոնյանի, ուսուցիչներ Ծ. Պասկևիչյանի, Մ. Բաբայանի, Ա. Յախչյանի, Ա. Պետրոսյանի, Հ. Բաբայանի գլխավորությամբ:

Այստեղ աշակերտները լավ են սերտում հայրենյաց դասերը: 9-րդ դասարանի Արարատ Աղունցը «Իմ հայրենիքը Հայաստանն է» թեմայով շարադրությունը սկսել է ժողովրդական երգի տողերով՝

Ես մի ծառ եմ ծիրանի, Հին արմատ եմ անվանի...

և վերջացրել Մուշեղ Իշխանի խոսքով՝

Հայ լեզուն տունն է հայուն:

Նրա համադասարանցի Մարգարիտա Գրիգորյանը շարադրության բնաբան է ընտրել Լեոնիդ Ազգալոյանի խոսքը՝ «Սա Հայաստան է՝ և վերջ...» և ավարտել այսպես. «Ես սիրում եմ իմ հայրենիքը, ուզում եմ ամբողջովին նվիրվել նրան»՝ մեքեքեքելով Նժդեհի խոսքը. «Մեռիր այնպես, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ. ահա իմ դավանած հայրենասիրությունը»:

Հայրափին գրում է, որ ապրում է Արցախ աշխարհում, Քաշաթաղի շրջանի Հոջանց գյուղում, որն իր փոքրիկ հայրենիքն է:

Սկստիչ Գրիգորյանը պատրաստ է զինվորագրվելու Հայոց բանակին և պաշտպանելու հայրենիքը: 10-րդ դասարանի Քնարիկ Ներսիսյանը, հիշում է Նժդեհի խոսքերը. «Նա, ով կռվում երբեք չի եղել, հաճախ մնում է անինքնաճանաչ և անճանաչ՝ իր շրջապատի համար: Վտանգի մթնոլորտում է առավելապես մարդը դրսևորում իր ներքին ուժերը, հակունքները, նկարագրի գծերը»:

«Իմ հայրիկն էլ է ազատամարտիկ, զի հայրենիք պաշտպանելը սրբազնագույն պարտք է, և եթե, Աստված մի արասցե, հարկ լինի, ես էլ կզնամ հայրենիքը պաշտպանելու», - գրում է աղջիկը:

Արհության և հայրենյաց դասեր են անցկացրել զինվոր Մաքսիմ Բաբայանը և պատմության ուսուցիչ Արթուր Յախչյանը:

Ա. Յախչյանը 7-8-րդ դասարաններում կերպարներով ներկայացրել է Խրիմյան Հայրիկին, Վանի կողոպուտը և հրդեհը 1878թ. մարտի 8-ին, թե ինչպես է նա Հայաստանի ազատագրության ծրագիրը ներկայացրել Փարիզի և Բեռլինի խորհրդաժողովներում:

Ձինդել Մ. Բաբայանը միշտ բարձր է պահում աշակերտների ոգին. նրանք ամեն առավոտ դասարան են մտնում Արցախ աշխարհի օրհներգը երգելով և

ամեն չորեքշաբթի, ի հիշատակ Հոջանցում զոհված 47 ազատամարտիկների, փառաց երգեր են երգում փառքի սրահում: Նրանք մեծանում են որպես փոքրիկ զինվորներ և այս փոքրիկ գյուղի դպրոցում սերտում հայրենյաց դասեր ու պատրաստ են զինվորագրվել Հայոց հաղթանակած բանակին:

Դասավարներ Սիրանուշ Պետրոսյանի և Հռիփսիմե Բաբայանի աշակերտները պատաստների վրա նկարել են Հոջանցի կախարդական բնությունը՝ Հոջանց սարը ներկայացնելով Վարդան Մամիկոնյանի դիմաքանդակով, մերթ որպես անմատույց բերդ, մերթ հայի հույս ու հավատ, մերթ որպես խրոխտ զինվոր, որ ամպրոպաշունչ գիշերներին փրկեց ազնիվ մի ազգ:

Նրանք լավ են սերտում մայրենիի դասերը, որ իրենց ձեռքբերում ունենան գիտելիքների աշխարհի բանալին, սերտում են պատմության դասերը, որ արժանավայել ներկայանան աշխարհին, որ խիզախեն ու հաղթեն:

Ուզում են շնորհակալություն հայտնել մեր դպրոցի այդ փոքրիկ զինվորներին և ուսուցիչներին՝ գեղեցիկ, ոգեղեն միջոցառումներ կազմակերպելու համար:

Թուշիկ ՄԵԼՔՈՆՅԱՆ Քաշաթաղի շրջանի Հոջանցի միջև. դպրոցի տեսուչ

ՕՐԿԱ ԽՈՐՀՐԴՊԿ

Մեր դպրոցներում պարբերաբար կազմակերպվում են նպատակային միջոցառումներ, որոնք այս կամ այն կերպ նպաստում են դպրոցականների աշխարհայացքի ձևավորմանն ու ընդլայնում նրանց հետաքրքրությունների շրջանակը՝ ի վերջո հանգեցնելով գիտելիքների նոր պաշարի ձեռքբերման ու ինքնահաստատման: Իսկ երբ միջոցառումը նպաստում է ազգային դաստիարակությանն ու հայրենասիրությանը, առավել քան անհրաժեշտություն է դառնում:

Յուրահատուկ էր Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ա. Տոնյանի կազմակերպած միջոցառումը. «Թրի դեմ՝ գրիչ, իսկ դարերի դեմ՝ Մատենադարան», որն ամենայն իրավունքով պահանջում է ծնրադիր զուլխ խոնարհել Մեծն Մաշտոցի սխրանքի առաջ և երդվել վաղնջական ժամանակներից դարերի լեռնապարով եկած մեր



ազգայնուս ու ազգահավաք ոսկեղենիկ մայրենիին: Հենց միջանցքում՝ դահլիճի մուտքի պատին աչք է շոյում «Ոսկեղենիկ մայրենի» ցուցակահանակը, որտեղ փակցվում են «Մայրենի լեզու» թեմայով շարադրությունները, նրանց գրական թոթվանքները: Դահլիճում թևածուլ էին մայրենիին նվիրված բանաստեղծություններ, հոգեզնայլ երաժշտության վերածված երգի ելեջները:

Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ա. Վանյանի կազմակերպած միջոցառումն ուրիշ հմայք ուներ: Հնչում էր մեր ոսկեղենիկ մայրենին՝ հայոց մեծերի սրտահույզ տողերով: Իրար ընդհատելով, իրար շարունակելով՝ արտասանում են միջոցառման մասնակիցները: Եվ ինչպես միշտ՝ միջոցառման ոգին ուսուցչուհին էր՝ իր գեղեցիկ, հուզիչ ելույթով ու ասումնքով: Ուսուցչուհին ջանացել է օրվա խորհրդին պատշաճ մակարդակով հանդիսություն ներկայացնել: Արքայական մեր լեզվով, աշակերտների շուրթերով փառաբանվեցին հային հայ պահող մայրենին, սուրբ Մեսրոպ Մաշտոցը, և դա հնչեց որպես հավատարմության երգում հայ մնալու: Հայկական երգն ու պարը լրացնելու եկավ այն մտայնությունը, որ կրթօջախում բարձր հիմքերի վրա է դրված հայեցի դաստիարակությունը:

Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի դասավարներ Արհա Չարությունյանը, Սվետլանա Սկրտչյանը և Անժելա Պետրոսյանը համատեղ կազմակերպեցին «Մայրենի լեզու, մայրենի բարբառ» վերտառությամբ գրական-գեղարվեստական ցերեկույթ: Բեմում 2-4-րդ դասարանների աշակերտներն էին: Հուզիչ էր ամեն ինչ՝ աշակերտների յուրաքանչյուր խոսք, երգ, պար: Նրանց ելույթները ներկաներին վստահություն ներշնչեցին, որ անաղարտ կապեն մայրենին:

Ա. Ղուլյանի անվան հ. 2 և Ֆիզմաթ դպրոցների հայոց լեզվի և գրականության մեթոդիկական նախագահներ Կարինե Իշխանյանը և Սուսաննա Սկրտչյանը հետաքրքիր ինտելեկտուալ խաղ-մրցույթ կազմակերպեցին նվիրված մայրենիին, որտեղ երեխաները ցուցաբերեցին իրանալի գիտելիքներ: Մերթընդ-մերթ հնչում էր նաև Ս. Կապուտիկյանի, Պ. Սևակի, Վ. Աբաջյանի, Հ. Շիրազի, Վ. Դավթյանի, հուսադրող, ոգևորող, հոգին գեղեցկացնող կենդանի ձայնը:

Ուրախությամբ հավելենք, որ մյուս դպրոցները ևս մասնակցել են Մայրենիի տոնին նվիրված՝ ասմունքի, ընթերցանության, շարադրությունների մրցույթին: Բոլոր դպրոցներում ճաշակով էին պատարստված պատի թերթերը, ցուցապատառները՝ «Որ զոնգա արկի տակ», «Հավետ պայծառ հայոց լեզուն», «Անաղարտ պահենք մեր մայրենին», «Այք, բեն, զիմ», «Հայոց լեզուն տունն է հայուն», «Գովք մայրենիին», «Մայրենի լեզու, մայրենի բարբառ», «Ոսկեղենիկ մայրենի», «Խոսենք հայերեն»:

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ Ստեփանակերտի ՄՊՍԿ մեթոդավարման մեթոդիպ

ԴԱՍ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ԵՐԲ ԴԱՍԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԳՐԱԿԱՆ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԻՍԿ ԴՈՒՇԻԱՆ` ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՃԱՆԱԴԱՐԷ

Գրականության ուսուցչուհի Նատաշա Պոլոյանի կազմակերպած բաց-դասերն արդեն ծանոթ են շրջանի շատ ու շատ ուսուցիչներին: Նրա կառուցած բոլոր դասերն էլ յուրահատուկ ձևաչափ ունեն և երբևէ չեն կրկնվում: Այս անգամ թեման Միսաք Մեծարենցն էր, որի կերպարի մատուցումն ամբողջապես լիարժեք դարձավ, երբ ուսուցչուհին նրան ներկայացրեց համաշխարհային դասական գրականության համատեքստում: Ուսուցչուհու մուտքի խոսքը, որը համագործակցային մեթոդների լեզվով անվանում են ուղեղնա՝ թվաց ազնվության կոչ: Պատահական չէ, որ դասը կրում էր «Միսաք Մեծարենց. մեծ մարդասերն ու գիշերերգակը» խորագիրը:

Ուշագրավ էր, թերևս, այն, որ նախքան դասը, ուսուցչուհին որոշակի նախապատրաստական աշխատանքներ էր տարել՝ մի քանի օր առաջ աշակերտներին հանձնարարելով երեկոյան պահերին զգալ բնության հրաշքը՝ խաղաղ և անդորր գիշերվա հանդարտությունը, լսել իրիկնային մեղմօրոր ձայները, տեսնել լուսնի և աստղալից երկնքի կախարհիչ գույները, որոնք ստեղծագործելու կնիքն են նրանց կամ կիշեցնեն ինչ-որ դեպք, որ կապված է ուսումնասիրվող բանաստեղծության հետ:

Աշակերտները բավականին խորն էին ուսումնասիրել վաղամեռիկ բանաստեղծ Միսաք Մեծարենցի ստեղծագործությունները:

Դասարանը կահավորված էր: Միսաք Մեծարենցի դիմանկարի մոտ վառվում էր 22 մոմ, որն ամփոփում էր նրա երիտասարդ տարիքի խորհուրդը: Երեք սեղանների շուրջ տեղավորվել էին աշակերտները, իսկ սեղաններից դրված էին գրքեր, ծաղկամանների մեջ՝ հասած ցորենի հասկեր:

«Կարմիր ծաղիկ մը» բանաստեղծության երգի վերածված երաժշտության մեղմ ու դյուրօթիչ հնչյուններով սկսվեց դասը, որը ներկայերիս տեղափոխեց երազների ու ցնորքների մեծարենցյան աշխարհ, ուր մի պահ կտրվեցինք իրական կյանքից, զգացինք քաղաքներու բույրը, վայելեցինք լուսնկա գիշերների հնայքը, երազեցինք, միաժամանակ հոգու ցավ ապրեցինք նրա վաղաժամ կորստի և անձնական անսփոփ վշտի համար:

Լսվում է ուսուցչուհու խաղաղ ու գերող ձայնը: Բարձրիկ լեռներում, կապույտ երկնքի դեմ դիմաց ծվարած Բինկյան գյուղը գուցե հիշատակվեր աշխարհագրական բառարաններում և երկրագիտական նյութերում միայն, եթե չդաճար «հիվանդ, հանճարեղ պատահուն» ծննդավայր-ներշնչարանը: «Աշխարհից հեռու» այս գյուղն էր, որ պարզեց նրան բանաստեղծելու աստվածային ձիրքը:

Ձուգահեռներ անցկացնելով արևմտահայ երկու խոշորագույն քնարերգու բանաստեղծների՝ Մեծարենցի և Դուրյանի միջև, ուսուցչուհին համադրեց ստեղծագործական հանճարի վաղ ծաղկման և անձնական դժբախտ ճակատագրի ընդհանրությունները: Մեծարենցի

պոեզիայի հետ աղերսվեց Դուրյանի պոեզիան:

Կիրառվող մեթոդների շարքում առանձնացավ «Մանրապատում» մեթոդը: Կատարվեց խմբային հետազոտական աշխատանք:

Յուրաքանչյուր խումբ ներկայացրեց «Ծիածան» ժողովածուից մեկ բանաստեղծություն՝ «Ձմրան պարզ գիշեր», «Աքսիաներու շուքին տակ», «Սիրերգ»:

Քանի որ Մեծարենցի ստեղծագործություններում բնութային ու սիրո զգացումը ներդաշնակված են, ուսուցիչը նպատակ էր հետապնդում՝ անհատի դրամայի, բնության ու սիրո երգերի միախառնված ուսումնասիրությունը տեսնել գիշերերգության մեջ:

Խմբերը, մեկը մյուսին լրացնելով, բանաստեղծություններին համահունչ երաժշտության տակ հրաշալի արտասանում էին, կատարում բանաստեղծությունների համառոտ վերլուծություն, տալիս գաղափարը, ընտրում մեկ քառատող, որը բնութագրում է յուրաքանչյուր ստեղծագործություն:

Դասապրոցեսում աշակերտների խոսքին միախառնվում է ուսուցչի խոսքը:

«Ծիածանը» բացվում է «Ձմրան պարզ գիշեր» բանաստեղծությամբ, որը գիշերերգության մի ճշմարիտ գլուխգործոց է: Նրա գիշերերգերում, իր իսկ բառերով ասած, «սերն միշտ կը վերածաղկի»: «Ծիածանի» բնութեմայաշատական հյուսվածքում գիշերը երազ է, սեր և սպասում: Ընտրված էին ամենամուրթ երանգները, ամենաշքեղ, անսպասելի փոխաբերական պատկերները: Գիշերվա խավարի մեջ բանաստեղծը միշտ էլ տեսնում է լույսը, որոնք «լուսեղեն ճամբան»:

Չամբույրիդ գիշեր, պատուհանս է բաց, թող որ լիառատ ծծեն հեշտագին Կաթը մեղմահոս լույսիդ տարվանքին՝ Ու զով շաղերուդ կախարդանքը թաց:

«Աքսիաներու շուքին տակ» բանաստեղծության տողերում ընդգրկված և պատկերված են բնության ամենամուրթ շարժումները, ամենամեղմ շշուկներն ու ձայները, ամենագեղեցիկ գույներն ու բույրերը:

Ձուրը ցայտեց ծաղիկ-ծաղիկ կը կաթե, Վրճիտ, ինչպես լուսն արցունքը մանկան, Նրվազն անոր կրիծծեծե հեշտական: Ծաղիկներն հովը թրթրեր կը թափե:

Մեծարենցը գերվեց «անույշ», «հեշտագին», «հաշիշով ու բալասանով» օժուն գիշերներով: Չովից ու ծովից գիշերը եկող համբույրները նրա համար դառնում են Տոն ու Կիրակի («Սիրերգ»):

Դասարանի երեք պատուհանի վրա նկարած էր գեղանկարը՝ աշակերտները ներկայացրին, թե յուրաքանչյուր բանաստեղծություն ինչ է խորհրդանշում: Սհա և լուսնկա գիշերը՝ ակացիայի շնչավորված պատկերներով:

Ուսուցչուհին նախապես աշակերտներին հանձնարարել էր դիտել լուսնկա գիշերները, զգալ ու ասարել բնության այդ պահը, տեսնել ձմեռային գիշերվա ճերմակ երազի ցայտքե-

րը, զգալ շաղերի թաց կախարդանքը: Արդյունքում՝ երեխաները զգացել են մեծարենցյան բնության գեղեցկությունը, նրա գույները, լույսն ու ստվերը, և նրանց փխրուն հոգին արձագանքել է այդ սքանչելի գեղեցկությանն ու ստեղծագործելու ցանկություն առաջացրել: Չնարավոր չէր առանց հուզմունքի և ներքին ուրախության լսել դասարանի աշակերտուհի Մարինեի բանաստեղծությունը, որը ընթերցեց ներշնչված, հուզված և զսպված դրողով:

Սահուն քայլերով կամաց մտտեցա, Տեսա, վախեցա, ինքն էր իրական: Գիշերվա տեսիլք... Օ՛, ո՛չ, մարմինն իրական, Լա էր, սրտնեղված՝ Միսաքն իսկական: Չայացքները մեր խոսեցին անձայն, Իսկ երբ դողդոջուն ձեռքս մեկնեցի, Աչքերս բացի, Միսաք կանչեցի, Նա չկար արդեն...

Եվ այսպես յուրաքանչյուր խմբից մեկական աշակերտ ներկայացնում է իր չափածո կամ արձակ խոսքը, որտեղ զգացվում է Մեծարենցի պոեզիայի հանդեպ ունեցած մեծ սերը: Կատարվում է նաև լեզվական աշխատանք: Առանձնացվում են երեք բանաստեղծություններում օգտագործված բառերն ու բառակապակցությունները, որոնք գործածվել են նույն իմաստով (գիշեր-մթնշաղ, հեշտագին-հեշտին, լուսեղեն-լուսե, հոգվույս-հոգի, դյուրանք-դյուրանք-հաշիշով օժուն):

Լսում են ուսուցչուհուն, աշակերտներին, դիտում պատուհանին նկարված էսքիզները և ակամայից հիշում Բելինսկու խոսքերը՝ ուղղված հանճարեղ բանաստեղծին. «Ի՞նչ է սա,- պոե՞զիա, նկարչություն՞, երաժշտություն՞: Թե՛ մեկը, և՛ մյուսը, և՛ երրորդը՝ միացած իրար, որտեղ նկարը խոսում է հնչյուններով, հնչյունները կազմում են նկար, իսկ բառերը փայլում են գույներով, փողփողում պատկերներով, հնչում են ներդաշնակությամբ և արտահայտում են բանական խոսքը»:

Իսկ մանկավարժական հմտությամբ ստեղծված միջառարկայական կապը, որ ստեղծվեց հայոց լեզվի, նկարչության և երաժշտության հետ, մի պահ գրական-գեղարվեստական բեմադրություն հիշեցրեց:

Դասի վերջում աշակերտների ստեղծագործական կարողությունները զարգացնելու նպատակով հանձնարարվեց շարադրություն վերլուծված յուրաքանչյուր բանաստեղծությունը բնութագրող ցանկացած վերնագրով («Սպասում», «Չուսահատություն»):

Աշակերտները կարողացան կատարել բանաստեղծությունների համեմատական վերլուծություն, բնության երգերի և սիրո երազային պատկերների համադրության մեջ ճանաչել գիշերերգակ Մեծարենցին, տեսնել հիվանդ, հանճարեղ պատահի Մ. Մեծարենցի զգայուն հոգու տառապանքը, որ արևի և կարոտ և սպասման հիվանդ է, ստեղծել կապակցված խոսք՝ զարգացնելով ստեղծագործական և երևակայական մտածողությունը:

Բոլորս հիացած ու գոհ էինք: Մնում է միայն ավելացնել՝ քանի դեռ մեր կրթօջախներում ունենք այսպիսի մարերնի նվիրյալ ուսուցիչներ, ապա մեր մեծերի պոեզիան երկար-երկար կապի սերունդների գիտակցության մեջ:

Ուսուցչուհու խոսքն ավարտվեց Վ. Թորոլդենցի՝ սիրելի բանաստեղծին ուղղված խոսքերով. «Երբ մրսում են այս աշխարհում, մեծ պատանի, գրկում են քո երգերը, և ահա արևը, քո երգած արևը, սուզվում է իմ ցուրտ հոգու մեջ կաթիլ առ կաթիլ»:

Ներկայացնեմք Մ. Մեծարենցի գիշերերգությունից ծնված բանաստեղծություն (հեղինակ՝ 11 հունամիտար դասարանի աշակերտուհի Չարուբունյան Մարինե)

ԳՇԵՐ
Պարզ ու լուսարձակ գիշեր գեղեցիկ, Մութ ու մեղմամուշ գիշեր թափանցիկ, Գիշեր, որ հոգուն վար լույս է տալիս, Սիրամերձ սրտին նոր սեր է տալիս: Նոր թև է տալիս, նոր հույս և ուղի, Փարատում վիշտը, ցավը դառնադի: Մի կախարդական, լուսնկա գիշեր, Պատուհանիս դեմը տեսա ես շողեր, Շողեր՝ գույնզգույն, շողեր՝ գրավիչ, Կարծես կանչում են, ժպտում ու ճշում, Կանչում են նորից ու ձեռքով անում, Անհետանում են ու նորից կանչում: Սահուն քայլերով կամաց մտտեցա, Տեսա, վախեցա, ինքն էր իրական Գիշերվա տեսիլք... Օ՛, ո՛չ, մարմինն իրական

Լա էր, սրտնեղված՝ Միսաք իսկական: Լուռ ու տրտմազին իրար մայեցից, Ես տեսա նրա թախծոտ աչքերը, Վշտոտ ու լցված ծանր կոպերը: Չայացքում տանջված մի կնիք տեսա, Ուժասպառ, անսեր Միսաքին տեսա: Նա լուռ էր, ոչինչ չէր խոսում, Կանգնած մայրու էր, մեկ-մեկ էլ ժպտում, Նրա դեմքից լույս էր արձակվում: Սենյակս լցվում, շուրջս տարածվում: Գիշերը կարծես դարձավ լուսավոր, Փոխվեց ամեն ինչ, դարձավ թևավոր, Մոտեցա նրան, փորձեցի օգնել, Սակայն նա լուռ էր, չէր ուզում խոսել, Գիշերվա խաղաղ անդորրը խախտել: Չայացքները մեր խոսեցին անձայն, Իսկ երբ դողդոջուն ձեռքս մեկնեցի, Աչքերս բացի, Միսաք կանչեցի, Նա չկար արդեն... Պատուհանիս մոտ մի շող կար միայն Լույսի գեղեցիկ մի քող կար միայն Սրտի թրթիռներ, անմոռաց հուշեր, Լուսնկա գիշեր և սեր կար միայն:

Արմինե ՄՈՒՐԱԶԱՆ
Մարտկերտի շրջվարչակազմի
աշխատակազմի կրթության բաժնի
առաջարար մասնագետ

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԿՐԻՍՏԵՐ ՈԳԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆԸ

Ասկերանի շրջանի Դաշուշեն գյուղի հիմնական դպրոցում կենսաբանության դասերն ամենահարավորիչներից են: Դրանք միայն աշակերտական սեղանին զանված չեն ընթանում: Չնարավոր է դառնում թեմաներից շատերը բնության գրկում անցկացնել: Դպրոցի պատերից դուրս ուսումնառության առավելություններից է ոչ միայն աչքով տեսնելը, այլև՝ շոշափելը, նկարագրելը, նյութի վերաբերյալ հարցադրումներ, ենթադրություններ կատարելը, հաստատելն ու ժխտելը, եզրահանգումներ անելը: Դրանք երբեմն հայտնագործության հրճվածք են պատճառում:

Այլ կերպ՝ մշուշվում է պարտադրականի նշանոցը, և բնությանը միանալու անհիմա զգացողությունը ինքնաբացահայտման ազատություն է տալիս: Դա, անշուշտ, նաև դասավանդող ուսուցչուհու՝ դպրոցի տնօրեն Մ. Ծատրյանի ներդրումն է, որն անձնական վերաբերմունքով ուսուցանում է երբևէ չնոռանալ ամենաչնչին ավանդն անգամ կամ բարյացակամությունը:

Նա սիրով ընդառաջ գնաց իններորդ դասարանից Մարիամի այն առաջարկությանը, որ մոտ ապագայում «Սելեցիցիա» թեման ուսումնասիրելու նպատակով ուզում են՝այցելել իրենց նախկին ուսուցչուհի Արմինե Սուլեյմանյանին և ակամատես լինել բույսերի նոր տեսակների առաջացման գործում մարդու ազդեցության արդյունքներին: Նրանք նպատակահարմար համա-

րեցին անակնկալ այցելությունը, քանի որ փետրվարի 24-ը նրա ծննդյան օրն է: Նոր գույնի վարդեր սերող իրենց հոբելյարին իրենք նախընտրում են հայրենի գյուղի անզուգական ծննդավայրից տանել՝ շատ և արմատներով (զուցե իր փորձերի ընթացքում դրանք ևս ինչ-որ բան հուշեն, պիտանի լինեն):

- Կեցցեք,- դուռը բացելով՝ ակամա բացականչեց հանկարծակիի եկած ուսուցչուհին:

- Շնորհավորում ենք Ձեզ ծննդյան օրվա առթիվ,- համանվագի պես երգեցիկ հնչեցրին աշակերտները:

- Ներս համեցեք,- անկեղծորեն ցնցված ու զգացված էր ուսուցչուհին:- Որքան կարևոր դարձրեց իմ կողմից երբեմն մոռացվող, այ, հիմա արդեն թանկագին օրը: Իսկ երբ ձեր անկեղծ վերաբերմունքին զուգարվում է բնության այս շունչը՝ ծննդավայրի անզուգական բույրը... Չուսամ, որ եկող տարվա համար անտառում թողել եք ծաղիկներ, բոլորն արմատափիլ չեք արել: Միայն ես չէ, մեր տունն էլ արբեց այս բույրից: Դուք հիշում եք իմ նախասիրությունները: Սիրում եք կապ պահպանել և նշանավորել սովորական պահերը: Ի՞նչ երջանկություն պարզեցիք ինձ՝ ինքներդ էլ չգիտեք...

Աշակերտները օրն արդյունավետ անցկացնելով, հաճելի օգտակարի հետ զուգակցելով՝ դեռ երկար ժամանակ կվերապետ բնական վար-

դերին նոր գույներ ու երանգներ պարզելու ուսուցչուհու ազնիվ ձգտման --առարկայացման վայելքը: Նրանք տեղյակ էին յոթական գույների ու երաժշտական հնչյունների, վեցական զգայարանների ու հայոց լեզվի ծայնակորների մասին: Բայց եթե գիտեին էլ, որ դրանք զանազան վերադասավորումներով, խայտաբղետ զուգակցումներով, ներդաշնակությամբ իրենց հարիիր ոլորտներում ստանում ենք զմայելի երանգների, մեղեդիների, համի, հոտի, խոսքի, ապրումների անկրկնելի, անսպասելի, անսպառ դրսևորումներ, ապա նորություն էր, որ դրանց լուռ ապաստող ստեղծաշարը պատրաստ է իրար հերթափոխող բոլոր սերունդների որոնող, ստեղծագործ գավակների առջև հավերժ ծառայելու, նրանոր գարմնացական դռներ բացելու...

Նրանց ունկերում դեռ երկար են հնչելու Ա. Սուլեյմանյանի խոսքերը, որ այսօրվա արարքը նաև երախտագիտության դրսևորման մի արտահայտություն էր: Իսկ երախտագիտությունը բնության հանճարեղ և հար գնահատելի արժեքներից է, երկուստեք ոգևորության ակունք: Բարի նկրտումով ամեն մի արարք մի դյուրիչ գույնի, առիթնող բույրի, հոգեհմա հնչյունի, ամոքիչ խոսքի, ապրեցնող զգացման ծնունդն է ու նորի դրդիչը: Այս աշխարհը թափանցելու համար պարտադիր չէ լինել հանճարեղ նկարիչ, երաժիշտ, խոսքի կամ արվեստի վարպետ, բժիշկ,

խոհարար, սելեցիցիներ... Աշխարհ եկած ամեն մի մարդ արդեն տաղանդ է: Չանճարեղ է նա, ով իր օժտվածությունը կարողանում է ոչ միայն պահպանել, այլև ի հայտ բերել իր ներուճակությունը, իր ունեցածը պարզել ամենքին ի տես՝ որպես բաժին: Ով այս կերպ է հաղորդակցվում մարդկանց հետ, իր հոգու զանձները նվիրում է նրանց՝ էլ ավելի զորացնելով ու հարստացնելով իր ներաշխարհը: Այսպիսիները պահպանում են իրենց նախասիրությունները, եզակիությունը՝ ունենալով իրեց գույնն ու տեսքը, տեսակը: Այսպիսի հանճարեղների հանդիպում ենք ամեն քայլափոխի, նրանք իրենց չղավաճանած, չաղճատված երջանք պարզ ու հասարակ մարդիկ են, իրենց բնույթով սիրելի, ձգող...

Օրվա հոբելյարն էլ փառաբանել զետեղում էր ծաղիկները իր ծաղկանոցում, մտածում հանդիպման պարզեցնելով երկրորդն ոգևորության, հոգևոր սլացքի մասին:

- Տվողին տրվում է,- բարձրաձայն ամփոփեց նա, որին անդրադարձում ենք՝ կրկնելով:

- Մենք էլ ենք շնորհավորում, օրինյալ թող լինի ծնունդը, ուսուցչուհի:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԵԹՈԴԻԿԱ

СИСТЕМА ИСПРАВЛЕНИЯ И ПРЕДУПРЕЖДЕНИЯ ОШИБОК НА УРОКАХ РУССКОГО ЯЗЫКА

Работа над ошибками должна формировать у учащихся особые умственные действия и операции, которые позволили бы ученикам учиться на собственных ошибках. Для организации самостоятельной работы над ошибками можно использовать таблицу, которая подсказывает, на какое правило допущена ошибка, и в которой дан образец, как правило исправлять допущенные ошибки.

Таблиц <<Работа над ошибками>> включает в себя более 30 орфограмм, написание которых вызывает затруднение и орфограммы связанные с изучением нового материала. Каждое правило имеет свой порядковый номер. Он предполагается для того, чтобы ученик мог быстро и легко найти в таблице нужную ему орфограмму. Все учащиеся в начале года получают такую таблицу. Таблица заполняется по мере изучения того или иного правила.

Начинается работа с проверки рабочих тетрадей. Напротив слова, где допущена ошибка, на полях выписывается цифра-номер орфограммы, помещенной в таблице. При помощи условных знаков ученик самостоятельно отыскивает и исправляет ошибку, проговаривает правило, выполняет дополнительные тренировочные упражнения на данную орфограмму. Каждая работа проверяется и оценивается, при этом учитывается правильность и точность исправления.

Образец таблицы <<Работа над ошибками>>

N	Правило	Пример
22	В конце существительных женского рода после шипящих пишется <u>ь</u> .	Ночь(суц. ж.р.) Дочь(суц. ж.р.) Тишь(суц. ж.р.)
	В конце существительных мужского рода после шипящих <u>ь</u> не пишется.	Сторож(суц. м.р.) Шалаш(суц. м.р.)

Таким образом, учитель имеет возможность контролировать каждого ученика, видеть его <<любимые>> ошибки и умение правильно выбрать нужное правило, выделить наиболее трудные орфограммы для класса и соответственно возвращаться к тому или иному материалу, индивидуально подбирая упражнения для каждого ученика и целенаправленно давать задания для всего класса. В комплекте с таблицей подобраны схемы-опоры, которые помогают учащимся вспомнить то или иное правило. Так как основная масса ошибок-на правописание падежных окончаний имен существительных и имен прилагательных, в таблице размещены правила.

N	Правило	Пример
10	Чтобы узнать падеж существительного надо найти слово, от которого оно зависит, и поставить от этого слова вопрос к существительному. В именительном падеже существительное является подлежащим.	Скоро наступит(что?) зима(суц. им.п.) Дети рады (чему?) зиме(суц. д.п.)

Результат данной работы регулярно заносится в технологические карты.

Таблица <<Работа над ошибками>>

заставляет учеников более внимательно относиться к допущенным ошибкам, анализировать и систематизировать их. Данная таблица - надежный помощник учителя при повторении, изучении нового материала, при подборе индивидуального задания. С учетом данной таблицы учитель точно и безошибочно подбирает задания, необходимые данному ученику.

Далее, в рабочих тетрадях выписываются слова с пропущенной орфограммой. Ученик должен прочитать это слово и, пользуясь таблицей или словарями, прописать орфограмму, а затем это слово выписать до конца строки, обязательно подчеркивая вставленную букву: уг...дал. Либо после слов с пропущенными буквами ставится тире. Значит, это слово нужно проверить, т.е. подобрать к нему проверочное. А если после слова стоит запятая, это-словарное слово, надо просто выписать его до конца строки. Работа над ошибками не самоцель. Исправлением, повторением правил это не заканчивается.

На материале слов, где были допущены о ш и б к и , п и ш у т с я диагностические, зрительные диктанты, между учащимися проводится взаимопроверка работ. Работа над ошибками-творческая работа, требующая многих умений и навыков. Раз в месяц проводится защита индивидуальной домашней работы над ошибками. Цель работы-развитие исследовательских и творческих навыков, умение оформить и защитить результат самостоятельной творческой работы, развитие интереса к аналитической деятельности. Основными видами самостоятельной работы учащимися над ошибками являются:

- 1)самостоятельное отыскивание и исправление ошибок;
- 2)самостоятельное исправление ошибок, подчеркнутых учителем или отмеченных при помощи специальных условных знаков;
- 3)самостоятельное выписывание слов, в которых допущены ошибки;
- 4)составление предложений со словами, в которых были допущены ошибки;
- 5)работа со словарями
- 6)выполнение тренировочных упражнений на те правила, на которые допущены ошибки.

Памятка для работы над ошибками по русскому языку.

Объясняя ошибки, двигайтесь всегда от общего к частному:

- 1)определите, в какой части речи допущена ошибка;
- 2)определите, в какой части слова допущена ошибка;
- 3)определите, на какое в целом правило допущена ошибка;
- 4)сформулируйте конкретный пункт правила, на которое допустили

ошибку;

- 5)найдите данное правило в памятке и выполните работу над ошибками.

1.Точка, вопросительный и восклицательный знаки в конце предложения.

Выпиши предложение. Поставь в конце предложения нужный знак.

2.Слог

Раздели слово на слоги.

Делай так: у-чи-тель

3.Перенос слова

Раздели слово на слоги для переноса.

Делай так:оси-на

4.Мягкий знак на конце слова и в середине слова.

Выпиши слово, в котором допущена ошибка, правильно. Подчеркни мягкий знак запиши еще 5 слов на это правило.

Делай так:ель, пень, день, конь, соль, роль.

Мальчик, пальчик, кольцо, пеньки, деньки.

5.Гласные после шипящих.

Выпиши слово, в котором допущена ошибка, правильно.

Запиши еще 5 слов на это правило.

Делай так: машина, шина, малыш, голыши, шиповник, ширина.

6.Ударение в слове.

Выпиши слово. Поставь над словом знак ударения.

7.Безударная гласная в слове, проверяемая ударением.

Выпиши слово. Поставь знак ударения. Безударную гласную в слове проверь ударной.

Делай так: Волна-волны

8.Словарные слова.

Выпиши слово, в котором была допущена ошибка, правильно. Поставь знак ударения. Напиши слово 10 раз, напиши родственные слова.

9.Парные звонкие и глухие согласные.

Выпиши слово правильно. Проверь согласную.

Делай так:мороз-морозы.

10.Большая буква в именах собственных.

Выпиши слово правильно. Запиши еще 5 слов на это правило.

11.Разделительный мягкий знак.

Выпиши слово правильно. Запиши еще 5 слов на это правило.

Делай так:коля, перья, ружья, соловьи, ручьи, листья.

12.Двойные согласные в слове.

Выпиши слово правильно. Запиши еще 5 слов на это правило. Раздели слова для переноса.

Делай так:рас-сказ, рас-свет, рас-сердил-ся, бес-сер-деч-ный, бес-сон-ный, бес-страш-ный, ван-на, кас-са, те-ле-грамма, ан-тен-на, груп-па.

13.Правописание непронизносимых согласных.

Выпиши слово, подбери к нему проверочное слово.

Делай так:звездный-звезда, вкусный-вкус.

14.Гласные и согласные в приставках.

Выпиши слово правильно, выдели в нем приставку, напиши еще 5 слов с этой приставкой.

15.Правописание предлога со словом.

Выпиши предлог со словом, между

предлогом и словом вставь еще слово.

Делай так:к берегу, к(крутому) берегу.

16.Разделительный твердый знак.

Выпиши слово правильно, напиши еще 5 слов на это правило, выдели приставки в словах.

17.Мягкий знак в конце существительных после шипящих.

Выпиши слово правильно, определи род. Напиши еще 5 слов на это правило.

Делай так:луч(м.р.), калач, ключ, обруч, чертеж, палач,

ночь(ж.р.), дочь, речь,

полночь, мощь, ложь.

18.Не с глаголами.

Выпиши глагол с не. Запиши еще 5 слов на это правило.

19.Правописание безударных окончаний.

-существительных

Выпиши существительное определи склонение и падеж, выдели окончание, запиши свой пример на это правило.

Делай так:к бабушке (I скл. Д.п.), к варежке

-прилагательных

Выпиши прилагательное вместе с существительным, поставь вопрос от существительного к прилагательному к лесу (какому?) дальнему.

-глаголов.

Выпиши глагол правильно, поставь глагол в неопределенную форму, определи спряжение, число, запиши свой пример на правило.

Делай так:пишет-писать(I спр.), колет

20.Правописание ТСЯ и ТЬСЯ.

Выпиши слово правильно, поставь вопрос, напиши еще 5 слов на это правило.

Делай так:пишется(что делает?), колется, находится, сдается, собирается, колотья(что делать?), находится, сдаваться, собираться.

21.Правописание местоимений с предлогами.

Выпиши местоимение с предлогом, подчеркни предлог, запиши еще 3 местоимения с этим предлогом.

Делай так: у-нас, у-вас, у тебя, у них.

Литература

Е.В.Васильева Работа над ошибками по русскому языку

О.Н. Сафронова Работа над ошибками

Т.В. Игнатович Правильность речи: языковые и речевые нормы

Л.А. Мурина Методы формирования у учащихся орфографических и пунктуационных навыков.

Н.В. Гречухина Орфография как система правил правописания.

Т.А. Печенева. Уроки пунктуации.


М.А. Яковлева Памятка по работе над ошибками.

СУСАННА ГАЗАРЯН
Национальный Институт
Образования

Республики Армения в НКР,
специалист русского языка

ԴԻՄԱՆԿԱՐ

ՈՒ ՄԻՃՏ՝ ՆՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ



Կենսագրություններ կան, որոնք շատերի համար կյանքի ուղեցույց կարող են լինել ու մի ամբողջ դպրոց են իրենց ելույթը: Այդպիսին է շոշաֆու (Չափու) ու նրա սահմաններից դուրս ճանաչում ու բարի համբավ ունեցող մանակավարձներից մեկի՝ Սամվել Օհանյանի անցած ուղին: Կյանքի (63-ը ամիսներ առաջ է լրացել) ավելի քան 40 տարիները նա ցվրել է մանակավարձական գործունեությանը: Ու միշտ՝ նույն դպրոցում, միշտ՝ նույն առարկաները՝ պատմություն և հասարակագիտություն: Համաձայնե՞ք՝ քչերին է այսպիսի բախտ վիճակվում: Ավելի ճիշտ, քչերն են այսպես վարվում, հայրենի գյուղի հարազատ օջախին այս ձևով նվիրվում, հարմարվում, համագյուղացիների հոգսերը, ուրախությունն ու դառնությունը իրենցը համարում: Համենայն դեպս, Սամվելը (ես ինձ իրավունք եմ վերապահում այսպես դիմելու, քանզի 9-ում և 10-ում մեր դպրոցում է սովորել, ու ես դասավանդել եմ նրան): Այն մտքին է, որ աշխատանքի վայրը համախառն փոխելը (նույնիսկ անհարժեշտության դեպքում) ուսուցչի համար, մեղմ ասած, առավելություն չէ, ոչ էլ արտոնություն: Բոլոր դեպքերում սա իր կարծիքն է, իր տեսակետը: Պարզապես տարիներ շարունակ նույն ճանապարհով քայլելը, նույն կրթական օջախը մտնելը ուրիշ հաճույք է, որ բոլորին չի տրվում: Երեկվա իմ ուշիմ ու խելոք սանը այսպես է մտածում:

...Ճնշվել է Ազդեցություն, 1949թ. հունիսի 9-ին: Տեղի ութամյա ավարտելուց հետո ընկերների հետ բռնել է հարևան գյուղի՝ Մեծ Թաղերի ճանապարհը, ուր և ստացել է միջնակարգ կրթություն: Դա եղել է 1966-ին: Մի տարի աշխատել է կապի բաժանմունքում ու 1967-ին հայտնվել Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Ընդունվել է պատմության ֆակուլտետը և ուսումնառության չորս տարիներին իրեն դրսևորել որպես պարտաճանաչ, կարգապահ ու, որ կարևորն է, ընտրած մասնագիտու-

թյունը, դպրոցում սիրող ուսանող: 1971-ի ամռանը փայլուն միջերակարգ ավարտել է բուհը, եկել բուհ ու երկու ամիս անց՝ սեպտեմբերին մատյանը ձեռքին մտել դասարան: Այսպես մինչև 2012-ի աշնան առաջին օրը, երբ հերթը եկել իրեն է հասել: Կռահեցի՞ք: Այո, անցել է թոշակի ինչպես շատերը: Թերևս այն տարբերությամբ միայն, որ իրեն ճանապարհել են հանդիսավոր պայմաններում:

Իլյաս Պողոսյանը (տնօրենը) ու էլ մի քանի հոգի գովեստի, դրվատանքի խոսքեր են ասել, թանկարժեք նվեր մատուցել ու նոր միայն հրաժեշտ տվել: Ու վերջինս գոհունակության ու նաև կարոտի, ակիստանքի ժպիտը դեմքին, թողել է սիրելի դպրոցը, որ այնքան մոտ ու հարազատ է եղել (և է) իր սրտին: Ահա այսպես:

